

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲՈՆԴԵՍՆՑԸ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐ-  
ԳՈՒՄ

(1862—1865)

Գլուխ Ա.

Միքայել Նալբանդեանցը, ինչպէս յալտնի է, իւր  
ձեռնարկած Հնդկաստանի ճանապարհորդութիւնից վե-  
րագրածաւ Ռուսաստան 62 թուին<sup>1)</sup>: Նա Յունիսի  
18-ին հասնում է Ս. Պետերբուրգ, 25 օր մնում է այն-  
տեղ և ուղևորում է իւր Ճննդավարը—Նախիջևան,  
ուր և ժամանում է Յուլիսի 10-ին, երեկոյեան, Նոյն  
ամսի 14-ին առաւօտեան գալիս է Նախիջևան կապի-  
տան Զակօ-Պօտաբրովիչը և բարձր իշխանութեան հրա-  
մանով կալանաւորելով նրան, կրկին վերագրածնում է  
Պետերբուրգ, երբ նա դեռ չէր ժամանել ոչ իւր ճա-  
նապարհորդութեան, ոչ էլ իրան յանձնուած գործի  
մանրամասն հաշիւը պատրաստելու և ներկայացնելու  
այն հասարակութեան, որի ընտրութեամբ ու յանձնա-  
րաբութեամբ նա իրեւ լիազօր պատգամաւոր գնացել  
էր Կալկաթա Մասեհ Բարաջանի Նախիջևանի օգտին  
կտակած գումարը բերելու:

Հանգուցեալն իւր կալանաւորութիւնը մի թիւրի-  
մացութիւն է համարել. նա կարծել է, թէ բաւական  
է, որ ինքն երթալ, ում հետ հարկն է տեսնուի, խօ-  
սէ և գործը կը պարզուի և ինքն անմիջապէս կազա-  
տուի ու կվերադառնալ իւր գործին: Ալդ պատճառով  
էլ նա ուրախ է, հանգստացնում է իւրալիններին, հա-

<sup>1)</sup> Հնդկաստանի ճանապարհորդութեան մասին տես մեր  
«Միքայել Ղաղարեան Նալբանդեանց» գլ. Ը. ու Թ. էջ 93—110.

մոզում է նոցա լաց չինել, չտխրել, որովհետև ինքը շուտով կվերադառնար, նա ճսնապարհին էլ Պետերբուրգ գնալու ժամանակ, թողած իւր կալանաւորութեան գործը, ուրիշ մանր-մունք բաների մասին է մը-տածում: Նա Մոսկուալում խնդրում է նահանգապետին, որ իւր կառքը յանձնեն կապալառու Կարպօվին, որ վերադարձնէ Նախիջևան, Պետերբուրգից էլ գրում է իւր Մոսկուալի բարեկամներին, որ իմանան, թէ արդեօք կառքը յանձնուել է Կարպօվին, և հոգ տանեն վերանորոգելու նորան, որովհետև ճանապարհին Եկատերինասլաւում նա կոտրօւել ու փչացել էր:

Մինչև անգամ Պետերբուրգում, երբ նա արգելուած էր այստեղ, նա չէր հաւատում իւր գործի ճանրութեանը և իւր բանտարկութեան երկարատևութեան: Նա բանտից գրած իւր նամակներում ակնարկելով իւր գործի վերալ, քանից կրկնում է նոյն նախադասութիւնը. Անստուած է վկալ, որ ոչինչ չեմ հասկանում: Մենք անդադար պատահում ենք նորա նամակների մէջ հետևեալ ոճերին. Շնորհի ինչ գործը թող մնալ մինչև իմ գուրս գալս. կարելի է մինչև այն ժամանակ մենք տեսնուինք էլ, եթէ մինչև այն ժամանակ ես գուրս եկած չինեմ, այն գործն ալպէս արէք. յոյս ունիմ, որ շուտով կտեսնուինք. կարծում եմ, որ շուտով կդըր-կեմ ձեզ, և այլն և այլն: Սակայն երկար, տաղտկալի օրերը, շաբաթները և ամիսները անցնում էին և նորա ակնկալիքը չէր կատարուում:

Նալբանդեանցի կեանքն արգելանքի մէջ, գոնէ վերջերը, ինչպէս երևում է, շատ էլ խիստ չի եղել: Նա ունենում է իւր ձեռքին փող, որով ըստ իւր ցանկութեան, գնում է ինչ որ կամենում է. նա ամեն օր լաւ եղանակներին գուրս է գալիս բանտի պարտէզը զրօսնելու և ազատ օդի մէջ մնում է, որքան ցանկանում է. նա թոլլտութիւն է ստանում ամեն տեսակ գրքեր ստանալու, իւրայիններից, կարդալու գրական աշխատանքով պարապելու, նամակներ ստանալու, նամակներ գրելու. նա իրաւունք է ստանում համարեա ամեն շաբաթ երեքշաբթի, չորեքշաբթի, կամ հինգշաբթի օրերը տեսակցութիւն ունենալու իւր եղ-

բալը Ղազարոսի և միւս թէ մշտապէս Պ. Բուրգում ասլ-  
ըող և թէ ժամանակաւրապէս այնտեղ եկած իւր ծա-  
նօթների ու բարեկամների հետ:

Տեսակցութեան համար նշանակուած օրը, որի հա-  
մար, ինչպէս երևում է, ամեն անգամ առանձին թոլ-  
տուութիւն է ստացում եղել բերդապահից, վերակա-  
ցուն սպասում է՝ տեսակիցներին և առաջնորդում է նո-  
ցա տեսակցութեան համար սահմանուած ընդունարանը,  
որտեղ և մնում են նոքա մինչև 2—3 ժամը, երբ հան-  
գուցեալը ճաշում է եղել:

Նա ամեն օր նամակ է գրում: Նորան թոլա-  
տրուած է լինում նամակագրութիւն ունենալ իւր եղ-  
բալը Ղազարոսի հետ, որ հէնց նորան տեսնելու և  
նորա մօտ լինելու համար յաճախ նախիջևանից գալիս  
է Պ. Բուրգ և երկար միջոցներով ապրում այնտեղ,  
երբեմն և իւր մտերիմ ընկեր Անանիա Սուլթանշահի  
հետ, որ քննութիւն բռնելու նպատակով նոյնպէս գա-  
լիս է Պ. Բուրգ և երկար մնում այնտեղ:

Առհասարակ նա զատ անհանգիստ էր իւր ծնող-  
ների և մերձաւորների՝ քոլըերի և եղբայրների համար,  
որոնք միշտ արտասուալից նամակներ էին գրում նորան,  
ողբում, կոծում էին, նորան պատահած աղէտի պատ-  
ճառով իւրեանց անտանելի գրութիւնն էին նկարա-  
գրում, երբեմն էլ նոքա իւրեանց արտասուալից նա-  
մակների հետ ուղարկում էին նորան զանազան իրեղէն-  
ներ, ուտելիքներ, կարծելով, որ նա զրկուած է, մի-  
ջոց չունի ոչ գնելու, ոչ էլ մի տեղից ալդ բանեըը  
ստանալու: Նա խնդրում, աղաշում է Ղազարոսին, որ  
նա գրէ, հանգստացնէ նոցա, և մինչև իսկ արգելում  
է, որ նոքա մի որ և իցէ բան ուղարկեն իրան, ա-  
սելով, թէ ինքն ամեն բան առատութեամբ ստանում  
է, թէ ոչ մի բանի կարօտութիւն չունի: Նա մինչև  
իսկ բարկանում է իւր եղբօր վերայ, որ երբեմն հետե-  
ւելով նախիջևանցւոց օրինակին, ուղարկում էր նորան  
ընտիր ձուկ, ձկնկիթ և ուրիշ թանկագին ուտելիքներ,  
ասելով, որ նոյն բաներն աւելի հեշտ ճանապարհով և  
աւելի ընտիրները ստանում է ինքը փողով իւր բնա-  
կարանի մէջ և խնդրում է, որ բացի իւր սիրած սի-

գարներից, թղթից և գրքերից, ուրիշ ոչինչ չուղարկելին:

Նալբանդեանցը մի, ինչպէս յայտնի է, աշխոյժ բնաւորութեամբ կենդանի մարդ էր, Ընկերական շըրջանում նա սիրում էր խօսել, կատակել, երգել, դատել ու վիճաբանել, հրազարակական կամ հասարակական գործունէութեան մէջ նա ցոլց էր տալիս չափազանց մեծ, կարելի է ասել, անսպառ եռանդ գրական ասպարիզում նա արտադրում էր ոգևորուած, համոզուած, ուղղակի սրտից բղխած երկեր, որոնք յափշտակում գրաւում էին ամենքին, բանակուուի մէջ նա անդիմադրել տրամաբանութեան հետ միասին արտալայտում էր արտաքոլ կարգի տաքութիւն: Հասկանալի է ուրեմն, թէ որքան ծանր պէտք է եղած լինի ալդպիսի բնաւորութեան տէր մարդու համար յանկարծակի ընկնելը միախութեան մէջ, մի տեսակ առանձնանալը, կտրուելն աշխարհից:

Նա իրեն մեռած էր համարում այդ ժամանակները և՝ կեանքի և՝ գործի համար և հէնց այդ պատճառով էլ իւր նամակներում յաճախ կրկնում էր, թէ ինքն արգելանքի մէջ մի այնպիսի կեանք է վարում, որ ոչ մի բանով օգտաւէտ չի կարող համարուել: «Իմ այսօրուայ կեանքը կամ օրը, ասում էր նա, նմանում է երեկուանին, իսկ վաղուանը կրկնութիւն պէտք է լինի այսօրուանին»:

Նալբանդեանցի միակ ուրախութիւնն ու մխիթարութիւնն ալդպիսի հանգամանքներում լինում են նորա նամակագրութիւնը, բարեկամների ու ծանօթների հետ երբեմնական տեսուցութիւնը, ընթերցանութիւնը և գրական ալարապմունքը:

### Դլուխ Բ.

Նամակագրութեան միջոցով նա մի կողմից տեղեկութիւն է ստանում իւր ընտանիքի մասին՝ իւր ծերունի ծնողների, քուրիկ Գալիխնէի; քուրիկ Վառվառէի, Եղբալը Գրիգորի, եղբալը Ղազարի և միւսների մասին,

միւս կողմից էլ նա սրտով ու մտքով ապրում է իւր այն բարեկամների, ծանօթների և ընկերների շրջանում, որից ինքը բաղդի այնպիսի անլաջող բերմունքով խլուած կարուած էր: Առաջին տեսակ տեղեկութիւնների աղքիւր նորա եղբալը Ղազարոսն էր, որ համարեա միշտ Պետերբուրգում լինելով, մանրամասնաբար ու տեղով ծանօթացնում էր նորան իւրեանց ընտանեկան բոլոր հանգամանքներին, այնպէս որ նա կատարեալապէս միջոց ունէր առ շուրջը լինելու իւրալիններին վերաբերեալ ամեն գործի, ուրախանալ նոցա ուրախութեամբ, տիւրել ու տրտմել նոցա տիւրութեամբ ու տրտմութեամբ:

Երկրորդ աղքիւրը մասամբ գարձեալ Ղազարոսն էր, բայց զվարաւոր նորա մտերիմ ընկեր բժիշկ Սնանիա Առւլթանշահը, որի հետ նա կապուած էր շատ ժամանակից ի վեր բարեկամութեան ամենասեր կապերով: Ճիշտ է, նա համարեա իւր բոլոր նամակները գրում էր Ղազարոսի անունով, բայց ստուգ իրողութիւնն այն է, որ այդ նամակները միայն անունով կարող էին Ղազարոսինը համարուել, թէ չէ ամեն բան նոցա մէջ նա գրում էր Սուլթանշահի հասցէին, նորան ամելու, նորան յանձնելու, նորան հասցնելու, նորա կարծիքն իմանալու համար: Այդ հանգամանքը, ի հարկէ, պէտք է մեկնել նորանով, որ նախ՝ նորան թոլլատուած էր զվարաւորապէս նամակագրութիւն ունենալ միայն իւր եղբալը Ղազարոսի հետ, ուստի և նա ստիպուած էր ամեն բան նորա նամակներում զբել, բայց խօսել, գտաել, վիճաբանել իւր ընկեր Սուլթանշահի հետ. Երկրորդ՝ որ Ղազարոսն ինտելիդենտ մարդ չէր, նորա հետ չէր կարելի խօսել այնպիսի վերացական նիւթերի մասին, որպիսին հետաքրքրում էր նորան:

Նամակագրութիւնը կատարուում էր զվարաւորապէս ուսւերէն լեզուով, որովհետեւ ալդպէս էին պահանջում նորա կեանքի պայմանները: Սովորաբար նա ինքը գրում էր ուսւերէն, իսկ եղբալը պատասխանում էր հալերէն, որովհետեւ նա ուսւերէն այնքան լու չդի-

տէր, որ կարողանար լիովին հասկացնել նորան իւր միտքն այդ լեզուով:

Հետաքրքրական են հանգուցեալ հրապարակախօսի ալդ ռուսէրէն նոտմակները: Նոքա բացի իւրեանց քովանդակութեան վերին տարինանի հետաքրքրականութիւնից, շահեկանութիւնից, դրաւում են մեր ռուշադրութիւնը և նորանով, որ ցոյց են տալիս նորա ռուսաց լեզուի գիտութեան չափն ու պաշտօքը: Ակներեւ է, որ հանգուցեալն ալնքան լիակատար կերպով ծանօթ է եղել ռուսաց գրական լեզուին, որ ազատ ու համարձակապէս կարողացել է արտայալտել նորանով իւր միտքը, ազատ ու համարձակապէս կարողացել է խօսել ու շարադրել է այդ լեզուով: Նորա ռուսէրէն գրութեան ձեւը անբռնասրօսիկ է, մաքուր, կանոնաւոր, զուտ ռուսական ոճերով ու դարձուածներով, թէ և այն էլ պէտք է ասել, որ այդ նամակները բոլորն էլ շապագ, լանպատրաստից գրուած, շարադրուած բաներ են: Երեւում է, որ հանգուցեալը շատ ժամանակ է նուիրել ալդ լեզուի ուսումնասիրութեան, երկար ու լուրջ գործնական վարժութիւններ է ունեցել, որ կարողացել է ալդպիսի գրելու ձեւ, ոճ և ամենադժուար վերացական, գիտական մտքեր արտայալտելու դարձուածներ մշակել<sup>3)</sup>: Նալբանդեանցն ունեցել է շատ մօտ

<sup>3)</sup> Ալդ նամակները, «րոնք նիւթ են մատակարարել մեղ, մեր ալս գրուածքի համար, թուով 18 հատ են և գրուած են 62, և 64 թուականների ընթացքում: Դոքա սկսում են 1862 թուի Դեկտեմբերի 30-ից և վերջանում են 1864 թուի Յունիսի 13-ով: Նամակները երկուսն ուղղուած «սիրելի եղբայր» Անանիսա Սուլթանշահին, միւսները սիրելի կամ թանկագին եղբայր՝ Ղաղարոսին: Ալդ նամակները մենք ստացել ենք Պ. Մինաս Բերբերեանից, որի ձեռքն իրեն աղդականք անցել են դրա Անանիսա Սուլթանշահի մահից լատու: Օդուում ենք դէպքից ալպտեղ հրապարակով լալտներու պ: Մինաս Բերբերեանին մեր չնորհակալութիւնը, որ ամենալի սիրելութեամբ ալդ նամակները մեր տրամադրութեան տակ դրեց: Նամակների հետ միասին պ: Բերբերեանը մեղ լանձնեց և այն պաշտօնական թղթի պատճէնը, որ Նալբանդեանցը 1862 թուի Յունուարի 18 ին գրել է Գետերբուրգից Նոր-Նախիջեւնի քաղաքագլուխ Հալբանդեանին «Հնդկական զումարի»:

ծանօթներ, բարեկամներ և մտերիմ ընկերներ, բայց ոչ ոք նորան ալնքան մօտ, ոչ ոք նորա հետ ալնքան մը-  
տերիմ չի եղել, որքան բժիշկ Անանիա Սուլթանշահը,  
որի հետ, կարելի է ասել, նա ինչպէս հարազատ եղ-  
բար, բաժանել է իւր թէ ուրախութիւնը և թէ տըրտ-  
մութիւնը: Ալդ Անանիա Սուլթանշահը հետ է, որ նա  
ունեցել է ընդհանուր բարեկամներ ու ծանօթներ, դո-  
րա հետ է, որ նա անց է կացրել իւր ուսանողութեան ա-  
.մենալաւ, ամենազուարիթ ու երջանիկ տարիները, դորա  
հետ է եղել նորա խորհուրդները, նորա պարապմունքը,  
յտքի փոխանակութիւնը, ընթերցանութիւնը և կարդա-  
ցած գրքերի քննադատութիւնը, դրական պարապմունքի  
նիւթերի ընտրութիւնը, «Հիւսիսափալլի» աշխատակցու-  
թիւնը, և այլն և այլն:

Իոքա, ալդ երկու ամոլները Մոսկուայում իւրեանց  
ուսանողութեան ժամանակ ունեցել են մի գիտական

մասին, որից մենք նոյնպէս օգտուեցանք մեր այս գրուածքի  
համար և որ նորա ձեռքն է անցել նոյնպէս Սուլթանշահի  
մահից լետով նամակների հետ միասին: Անանիա Սուլթանշա-  
հը նոր-Նախիջևանի Սուլթանշահնեան ընտանիքից էր, նա  
աւարտել էր իւր ուսումը Մոսկուայի համալսարանի բժշկական  
բաժնում և բաւականին ժամանակ էլ առանձնապէս պարա-  
պել և կատարելագործուել էր իւր ընտրած գիտութեան ճիւղի  
մէջ: Կեանք մտնելով, նա չէ հաստատուել իւր ծննդավալը  
նոր-Նախիջևանում, այլ տեղափոխուել էր Ղզլար քաղաքը,  
սահնանելով քաղաքալին բժիշկի պաշտօն և նոյն պաշտօնի  
մէջ մնալով մինչև իւր մահը: Սուլթանշահը, որ մեռաւ սրա-  
նից երկու տարի առաջ, լատուի է մեր դրականութեան մէջ  
իբրև հեղինակ «Հալոց աղջի լուսաւորիչք» խորագրով մի թա-  
տերական երկի, որ տպագրուած է 1859 թուի «Հիւսիսափալլ-  
լում»: Ալդ թատերական գրուածքն իսկապէս հեղինակութիւն  
չէ, ալլ թարգմանութիւն ռուսերէնից: Սուլթանշահը թարգ-  
մանելով նորան Նախիջևանցից օգնութեամբ և մասնակցու-  
թեամբ, լարմարեցրել է նորան Հալոց կեանքին: Նա նորա  
մէջ դուրս է բերել Խալիքեան դպրոցի հիմնադիր Յարութիւն  
աղա Խալիքեանին, Գաբրիէլ Վարդապետ Ալվագեանին, Գէորգ  
Գանանեանին և ալլ ես մի քանի երկրորդական գործիչների  
տիպարներ, տալով դոցա ասածներին ու արածներին երգի-  
ծաբանական ու զաւեշտական ընաւորութիւն: «Հալոց աղջի-  
լուսաւորիչք»-ի մասին տես Սմբատ Շահազիզեանի «Ալմա-  
նալին նամակներու էջ 25:

շըջան կամ ընկերութիւն, որ կանոնաւոր նստեր է ունեցել, որտեղ կարգացուել են բնագիտական բժշկական և վիրհատական ախտաբանական ռեֆերատներ, որոնց առթիւ եղել են ոգևորուած շահեկան վիճաբանութիւններ, սարքուել են ուսանողական անմեղ խնջուքներ և դարեջրի անհամար շշեր են դատարկուել: Դոցա, ալդ նստերին ու խնջուքներին նուիրուած ժամերն եղել են նորա կեանքի ամենաթանկադին րոպէները:

Նա ալդ ժամանակներն ապրուստի շատ քիչ միջոց է ունեցել, բայց այնպիսի մեծ բաւականութիւն է ստացել, այնքան լափշտակուել ու ոգևորուել է, որ իրեն ամենից բաղդաւոր է համարել, որովհետև ազտա է զգացել իրեն, որովհետև ապրել է այնպէս, ինչպէս ինքն է ցանկացել, որովհետև արել է այն, ինչ որ իրեն հաճելի է եղել:

Պատահել է և այնպէս, որ նա իւր ընկերների հետ ուսանողական զուարթ անհոգ զբօսանքներ է կատարել Մոսկուալի փողոցներում, հրապարակներում, հեռաւոր թաղերում ու խուլ, կենդրոնից հեռու ընկած անկիւններում, որտեղ և լաճախ պատահել է զանազան կօմիքական արկածների, անծանօթ և շատ հետաքրքրական տիպերի. մէկ անգամ, օրինակի համար՝ նա իւր ընկերների հետ մի այդպիսի զբօսանքի ժամանակ ընկել է մի բազմալարկ տան վերնատուն, որտեղ տեսել ու ծանօթացել է մի պարոնի հետ, որ միայն քիմիստան Փորմուլաներով է խօսում եղել: Ի զուր չէ անմահ Շիլէրն ասել, թէ մարդուս կեանքի մալիսը միայն մի անգամ է ծաղկում:

Ալդ ժամանակներն եղել են նալրանդեանցի կեանքի մալիսը. նա ալդ ժամանակները դեռ անհոգ է եղել, նորան դեռ չի ճնշած եղել անագորոյն կեանքի ծանրութիւնը, նա առողջ է եղել, լցուած ապագաթի բարի յոյսերով, լցուած գործելու, աշխատելու անհուն եռանդով: Իսկ ալժմ—ալժմ որքան մեծ հակապատկեր: Մալիսեան ծաղիկներն արդէն թառամել են, կեանքը խոր խորշումներ է գրոշմել նորա լայն ճակատին, առաջութիւնը խանդարուել, մտքի ծովից, հոգառարութեան՝ ծանրութիւնից հալուել ու մաշուել, ի

գուր չէ, որ նա ալդ ժամանակները յաճախակի կրկնում է եղել, թէ ինքը համբերութեամբ տանում է իւր խաչը, որովհետև ընտելացել է նեղութեան, որովհետև նորան կեանքի ճանապարհի վրա վարդեր չեն բուսել:

Այսպիսի դժուար հանգամանքներում, երբ կարելի է ասել, նորա կեանքի աշունն էր ժամանել, բնական է, որ նա անհամբեր սպասում էր իւր ընկեր Սուլթանշահին, որ կարողանայ սեղմել նորան իւր կրծքին, լիշել նորա հետ իւր կեանքի մայիսը, տեղեկութիւն ստանալ նորանից այն զրջանի մասին, որի մէջ նա ապրել էր, ու դորանով սակաւ մի քաղցր ու բուժիչ բալասան գնել իւր ցաւոտ խոցերի վրայ:

Ահա այս պատճառով էլ, երբ նա առաջին անգամ իւր եղբօրից իմանում է, որ Սուլթանշահը գալիս է Պետերբուրգ, երեխալի պէս ուրախանում է: «Մի նախազգացմունք ասում է ինձ, գրում է նա ալդ առթիւ իւր եղբօրը, որ ես շուտով նորան կգրկեմ, և եթէ ալդ ցնորք չլինի, այլ իրագործուի ծe facto, այն ժամանակ ես մեծապէս ուրախ կլինեմ, և երեխաներից մեծագոյնը — Գեօտտէն մի անգամ էլ սխալուած կլինի, որ ասել է, թէ մենք մեր երեւակալութեան երեխաներն ենք: Մենք ինքներս անցել ենք Կօօրդինատի այն կողմը և կամենում ենք մեզ հաւատացնել, թէ մենք բալորեքեանս էլ մի բացասական մեծութիւն ենք, Սուլթանշահի Պետերբուրգ գալը, նորա հետ մէկ-մէկ տեսնուելը, նորա հետ երկար ու բարակ նամակներով զըռուցելը, անցած-գնացածը լիշելը թէև քաղցրացնում էին նորա կեանքը, բայց չէին բուժում նորա ներկայ վէրքերը, որովհետև ներկայ վէրքերի համար հարկաւոր էին և ներկայ միջոցներ, որ Սուլթանշահը, ի հարկէ, չէր կարող տալ նորան:

#### Գլուխ Գ.

Սուլթանշահը, որի համար նա ասում է եղել, թէ եթէ նա Պետերբուրգից երթալ, ինքը ըևեռներից դուրս կմնալ, արդարացնում է նորա լուսերը, նա տեղե-

կութիւն է հազորդում նորան սիրելի միւս ընկերների, ծանօթների ու բարեկամների մասին, Պուդնևի, Գրիգոր Ալաջալեանի, Ուստինովիչի, Տէր. Մովսէսի, Նազարեանցի և միւսների:

Պուդնև Ֆէօդր Մաքսիմովիչը, որ ծառալում էր Մոսկուայի նահանգապետ Զակրեսկու մօտ իրեւ առանձին յանձնաբարութիւնների աստիճանաւոր, մի կենսունակ, մի շատ ուրախ բնաւորութեան տէր մարդ էր, այնպէս որ չէր կարելի նորան ճանաչել ու չսիրել: Նալբանդեանցը գեռ առաջ, իւր Մոսկուայում եղած ժամանակ ծանօթացել էր նորա հետ և տեսնելով նորա ուրախ բնաւորութիւնը, ընկերական մտերմութիւնը և բարեկամական հաւատարմութիւնը, սըրտանց սիրել էր նորան: Վերջին անգամ նա նորան տեսել էր Մոսկուայում 62 թուրի լունիսի վերջին. նա այն ժամանակ հիւանդ էր հիւծախտով, որի վերայ յետով աւելացել էր կարմիր-քամու բորբոքը, որ և ճակատագրական վախճան էր ունեցել: Նորա մահուան լուրը շատ տիրեցնում է նորան և ստիլում է կրկնել այն հին, բայց միշտ թարմ ճշմարտութիւնը, որ շատ գեղեցիկ արտայալուած է ուսանողական յայտնի (Gaudamus) երգի մէջ: —

Vita nostra brevis est,  
Brevi finietur.  
Venit mors velociter,  
Rapit nos atrociter,  
Nemini parcetur:

Ալոպէս է ամեն բանի վերջը, խորհրդածում է նա արդ մասին, որ սկիզբ ունի, տիպարական և անհատական մաքով միալն, ի հարկէ, և ոչ թէ ընդարձակ բնական, որտեղ մենք բնութեան անվախճան տնտեսութեան մէջ գործ ունինք հաւասարակշռութեան և զանազան տարրերի համախառնումների հետ: Այս գիտէ և Համլէտը: Ալդ առթիւ նա միտն է բերում և իւր մօտ բարեկամ քարի ու սիրելի տիկին Մարինիկոլաևնա Պանովալին, որ, ինչպէս երևում է, հանգուցեալ Պուդնևի մօտ բարեկամուհին է եղել: Նա, տիկին Պանովան ալդ ժամանակ մենակ էր մնացել ազատու-

թեան մէջ, ինչպէս որ ինքը Նալբանդեանցը մենակ էր արգելանքի մէջ: «Տիկինը կարող է, ասում է նա, Բէզետելովի հետ կրկնել. «բոլորեքեան ցըռւեցան—ոմանք մեռան, մէկն էլ արգելուած է»: Բայց չպէտք է լուսահատուել, աւելացնում է նա, որովհետև հանգամանքները հօ միշտ ալդպէս չեն մնալ. կանցնեն ամպերը, կփչի գարնան մեղմ սիւքը, արեգակը կծագէ, կլուսաւորէ ու կտաքացնէ ցուրտ դէմքերը: Ամենամեծ դժբաղդութիւնը պէտք է այն համարել, որ սիրելի «Թէոդորոշան» այլ ևս չկալ, յարութիւն չի առնիլ, չի վերադառնալ. խաղաղութիւն նորա ոսկրներին»:<sup>4)</sup>

Գրիգոր Ալաջալեանը նոր-Նախիջևանցի էր և սովորում էր Մոսկուալիի համալսարանի բնագիտական-մաթեմաթիքական բաժնում, բայց նա զրկուած էր նիւթական միջոցներից, որովհետև աղքատ ծնողների զաւակ էր, և իւր ուսումը կանոնաւորապէս շարունակելու համար, ստիպուած էր ապրել իւր համաքաղաքացի ունեսը ուսանողներից մէկի մօտ և վալելել նորա նիւթական օգնութիւնը: Նալբանդեանցը, որ գեռ Մոսկուայում ճանաչել ու սիրել էր նորան, նորա լնդունակութեան համար, միշտ հետեւում, միշտ խրախուսում էր նրան, որ նա յետ չմնայ իւր համալսարանուկան պարապմունքից, այլ աշխատէ աւարտել, կանդիտատի վկալական ստանալ, որ ալդպիսով կարողանալ նիւթական ապահովու-

4) Մարի Նիկոլաենա Պանովան մի շատ համակրեելի կին է եղել. նա առաջ դերասանուհի է եղել և ապրելուս է եղել Զադրեւակի նահանգապետի աղիւտանաներից մէկի Տուրչանինովի հետ, իրեն սիրու ընկեր Շուշնեւը և Նալբանդեանցը շատ մօտ բարեկամ են եղել նորան, այնպէս որ Տուրչանինովի և Շուշնեւի մահից և Նալբանդեանցի արգելուելուց լեռու, նա բոլորովին մենակ ու անմիտիթար է մնացել. Թէ որքան համակրելուս է եղել Պանովաին Նալբանդեանցը—ալդ երեսում է և այն տողերից, որ մենք կարդում ենք նորա նամակներից մէկում. «Շնորհակալ եմ, զրում է նա, նորա—Պանովաի իիշողութեան և դէպի ինձ տածած անփոփոխ զդացմունքի համար. սեղմում եմ նորա ձեռքը և ցանկանում եմ նորան առողջութիւն, ուրախ կւանք և բաղդաւորութիւն. Ահա այն ամենը, ինչ որ ես կուղնակի ասել նորան, և աելին կամ ուրիշ բան... առ ժամանակ չունիմ ասելու».

թիւն ձեռք բերել և իւր գիտական պարապմունքը շարունակել։ Այդ ուղղութեամբ տշխատում էր ազգել նորա վերայ և բժիշկ Ուստիանովիչը, որ նոյնպէս մօտ էր Նալբանդեանցի շրջանին և համակրում, սիրում ու լարգում էր Գրիգորին։ Պետերբուրգում այդ ժամանակներն ահա Նալբանդեանցը տեղեկութիւն է ստանում, որ Ալաջալեանը շեղուել է ուղիղ ճանապարհից, կիսակատար թողել, դուրս է եկել համալսարանից և այդպիսված ապարդիւն է արել թէ իւր և թէ Ուստիանովիչի աշխատանքը, լորդորանքը։

Նա սրտանց ցաւում է դորա վերայ ու խնդրում է Սուլթանշահին, որ նա, որ նոյնպէս համակրում էր Գրիգորին, կոչի իւր մօտ նորան, սրտարաց և Տete à Tete խօսէ նորա հետ և ստիպէ, համոզէ, որ նա պատրաստուի քննութիւն բռնելու։ Եթէ այդ յաջողի, դորանով նա, նտխ, պարտաւորեց ած կէինի իրեն, որ մեծ համարմունք ունի նորա վերայ, որովհետև նա իմար մարդ չէ և կարող է, եթէ միայն զարթնի իւր այն քնից, որի մէջ ընկղմուել է, երկրորդ, նա վախենում է, որ եթէ ինքեանք իրեւ մօտ բարեկամներ ալդ բանը չանեն, նա կիորչի և ինքեանք բարոյական մեծ պատասխանատւութեան տակ կըկնեն։ Կանդիտատի քըննութիւն բռնելուց յետով, նա միտք ունէր գրդել նորան զարունակելու պարապմունքը և մասնագիտօրէն ուսումնասիրելու աստղաբաշխութիւնը, երկրաբանութիւնը, հանքաբանութիւնը տարրաբաշխութիւնը և Հալերէնը, որ ինքն էր միտքը դրել սովորեցնելու նորուն։

Մենք չգիտենք, թէ ինչ պատճառով նա այդ Գրիգոր Ալաջալեանի համալսարանը թողնելու գործում միջազբաւմ էր վերոյիշեալ Նախիջևանցի ունեսոր ուսանողին, որին նա կոչում էր «Դանդու» և «Նախիջևանի արիստոկրատ»։ Հաւանական է կարծել սակայն, որ Գրիգոր Ալաջալեանի ուղիղ ճանապարհից շեղուելու և համալսարանը թողնելու պատճառն եղած լինի նիւթական միջոցների պակասութիւնը և վերոյիշեալ ուսանողի ալդ միջոցները նորան մատակարարելու կամ հալթայթելու գործում ցոյց տուած մի պախարակելի վարմունքը, որից Գրիգորը

ատիպուած, թողել ու դուրս էր եկել նորա մօտից: Եւ տոհասարտկ նալբանդեանցը չէր սիրում այդ նախիջեւանցի ուսանողին, որովհետև նա իւր կեանքով չէր յարմարում ոչ իրեն նալբանդեանցի և ոչ նորա ուսանողական վերոյիշեալ շրջանին: Նա հարուստ ընտանիքից էր, նա սեփականացըել էր իրեն դեռ իւր ուսանողութեան ժամանակ արիստոկրատիքական ձեւը, նիստուկաց և բարձրից էր նայում միւսների վերալ. Նա չէր հաւանում իւր համաքաղաքացի ուսանողներին, չէր խառնուում նոցա հետ. չէր սիրում լուրջ աշխատանքով պարապել, չէր մասնակցում նալբանդեանցի շրջանի գիտական նիստերին, ալլ, ընդհակառակը, աշխատում էր մուտ գործել այս կամ այն արիստոկրատ ընտանիքը և նալբանդեանցը շատ զարմանում էր այդ հանգամանքի վերալ և ինքն իրեն չէր կարողանում հանգիւ տալ, մեկսել, թէ որտեղից և բնչպէս պէտք է առաջ եկած լինէր լիշեալ ուսանողի մէջ ալդպիսի սխալ ուղղութիւն և այդ տեսակ արիստոկրատիքական ձբդտումներ: Ես չգիտեմ, գրում է նա Սուլթանշահին իւր նամակներից մէկում, որտեղից է այդ հակումները դէպի արիստոկրատիքականութիւնը: Արիստոկրատ, այն էլ նախջևանի արիստոկրատ. այդ միենոյն բանն է, թէ ասենք Լոնդոնի Պլէքէլ<sup>5)</sup>:

Տէր-Մովսէսը Մոսկուալի եկեղեցու Տէր-Մովսէս Ալմիսանեան քահանան է: Նալբանդեանցը նորա հետ ծանօթացել էր Մոսկուալում և մտերմացել էր այն օրից, երբ այդ քահանան նազարեանցի հետ, միասին երաշխաւոր լինելով նահանգապետի առաջ, արածակել էր տուել նորան բանտից և իրեւ կալանաւոր, ներսէս կաթողիկոսի հրամանով Ս. Եղմիածին ուղարկուելու ամօթալի արկածից: Այդ Տէր-Մովսէսի հետ ու նորա խորհակցութեամբ էր կատարել նա իւր զուարճակի կատակները Մսեր Մագիստրոսի հետ, որոնցից մէկի

<sup>5)</sup>Գրիգոր Ալաջալեանը Նոր նախիջնանցի. Արգիս Ալաջալեանցի որդին էր, նա լետոլ ամուսնանում է զեներալ Սուլթանշահի Աննա դստեր հետ և ծառաւութեան մտնում արգունի դրամատան բաժինը լիլնո քաղաքում, որտեղ և մեռնում է ինքախտից.

մասին ակնարկութիւն կալ նոյն իսկ Նիւսիսափալի մէջ նորա լիշտակարաններից մէկում։ Պատմում են, որ մէկ անդամ Նալբանդեանցը լսած լինելով թէ Մսերը շատ վշտացած է իւր պատրաստած քրիստոնէականների չվաճառություն հանգամանքից, մտածում է զուարճալի խաղ խաղալ նորա գլխին։ Նա, իւր ընկեր Սուլթան շահի հետ միասին, նախապէս խորհրդակցելով Տէր-Մովսէսի հետ, որ ապրում էր Մսերի տան դիմաց-դէմ գտնուած ընակարանում, հագնում են տկօրբատի զգեստներ՝ նեղ վարդիկ, երկայն, մինչև ոտքերի սրունքը հասնող պոչով ֆրակ և մի շատ անշնորհք ցիլինդր և դիմում են դէպի Մսերի տունը, որտեղ ալդ օրը, չգիտենք ինչ առթիւ, մեծ խնջուք է լինում և բազմաթիւ հիւրեր են հաւաքուած լինում։ Նալբանդեանցը շատ պղինձ փողով լցուած մի տոպրակ շալտկած իւր ընկերոջ ուղեկցութեամբ մտնում Մսերի տունը և խնդրում է, որ իրենց առաջնորդեն Մսերի առանձնասենեակը, որովհետև եկել են քրիստոնէական գնելու։ Տնեցիք միամտաբար կատարում են նոցա ցանկութիւնը, և երկու տարօրինակ զգեստներ հագած պարոնները անցնելով հիւրերով լցուած գահինցից և ամենքի զարմանքն ու քըքիչը յարուցանելով, մտնում են Մսերի սենեակը։ Մսերն ուրախացած, որ այնպիսի լոճախորդներ են գտնուել քրիստոնէականների համար, որ ուզում են գումարով գնել շատ օրինակ, սկսում է համարել փողերը, որ մեծ շառաչիւնով և ակօրբատի ձեւերով Նալբանդեանցը թափում է նորա տռաջ։ Մսերի կինը հիւրերի քըքիչից և յաճախորդների տարօրինակ զգեստների ու ձեւերից հասկանալով, որ ալդտեղ մի չար կատակ կալ, վերալ է հասնում, որ դուրս անչնոցա, բայց արդէն ուշ է լինում։ Ակօրբատները բարձր քըքիչ արձակելով դուկս են ընկնում տանից և տիկինը փալտը ձեռքին նոցա լետեից։ Ալդ ժամանակ հէնց բացւում է Տէր-Մովսէսի տան Մսերի դռանը նաևող պատուհանը և խլացուցիչ ծափահարութիւն է լինում ու կեցցէներ են լսում կատակողների և կատաղածոինջ հասցէին։ Նալբանդեանցը միշտ սիրով լիշում էր իւր անհոգ օրերում կատարած ալդ կատակը և սըր-

տանց զուարճանում էր: «Նա ալժմ էլ ինդրում է Սուլ-թանշահին, որ, երբ որ նա գրելու լինի Տէր-Մովսէսին, չմոռանալ գրել նորան իւր կողմից և ասել, թէ դժուար կլինէր նորա համար, եթէ նորա գրացին—Մսերը չդադրեցնէր իւր ճնուաքաղը և որ Բէկզադէն իւր ժամանակին իւրն աւելիքով լետ կպահանջէ նորանից և որ, վերջապէս, ինքը նոցա բոլորին էլ շատ ու շտրարև է անում»:

Ստեփաննոս Նազարեանցի հետ Նալբանդեանցը ծանօթացել էր հէնց՝ իւր Մոսկուա ոտք կոխած առաջին օրերը և իւր ուսուցչութեան ժամանակ Լազարեան ծեմարանում: Բայց առանձին մտերմութիւն այդ երկու հրապարակախօսների մէջ հստատուել էր 58 ժուլից, երբ սկսուել էր հրատարակուել «Հիւսիսափալլը»: Դոքա, ինչպէս լայտնի է, թէ իւրեանց ստացած կրթութեամբ, թէ զարգացման աստիճանով և թէ իւրեանց բնութեան խառնուածքով բոլորովին հակառակ էին միմանց, բայց ունէին մի գլխաւոր և էական ու ընդհանուր լենման ու շօշափման կետ, որ և նոցա բոլորովին միացնում, հաշտեցնում էր և փոխադարձաբար համակրելի էր դարձնում մէկզէկու—այդ նոցա նոր լեզու, նոր գաղափարներ քարոզելու և ազգի պտկասութիւնները հրապարակով անխնալ հարուածելու, մերկացնելու համոզմունքի և ուղղութեան միանմանութիւնն էր: Ճիշդ է, նոցա մէջ վերջերս պատահել էր մի խոշոր գժտութիւն «Հիւսիսափալլի» դրամական հաշիւների և աշխատակցական հոնորարի վերաբերմամբ և Նալբանդեանցն անբաւական թողել, հեռացել էր Պետերբուրգ ալյուդի համալսարանում կանդիդատի քննութիւն ըըռնելու և ալդպիսով ասլահովելու իւր նիւթական դրութիւնը, բայց այդ գժտութիւնը կամ ստոնութիւնը նոցա լարաբերութեան մէջ երկար չշարունակուեց: Նալբանդեանցը միշտ մնաց համակիր իւր բարեկամի ըըռնած գրական ուղղութեան, միշտ մնաց համոզուած նորա ազնութեան և բարոյական մաքրութեան վերըբերութեամբ, միշտ մտերիմ ու սրտանց բարեկամ, և ալդ համակրութեան, բարեկամու թեան անփոփոխ զգացմունքն էլ իւր հետ վերեզմոն տարաւ:

Նա սիրում էր ոչ թէ միայն իրեն նազարեանցին, որին անդադար բարեներ էր ուղարկում Պետերբուրգից ալ և նորա մեծ որդի Ֆեղիքինանդին, որ մի փայլուն, ընդունակ պատանի էր, որ մեծ լոյսեր էր տալիս ապագայի վերաբերմամբ և որ գժըսխտաբար այնպէս անակընկալ կերպով դեռ չծաղկած թառամեց: Նա հետաքըրքը ուղարկում էր Ճեղիալիս պարապմունքով, որ այդ ժամանակները պատրաստում էր համալսարան մտնելու, խնդրում էր Անանիալին իրեն տեղեկութիւն հաղորդելու նորա պարապմունքի լաջողութեան մասին, բարեներ էր ուղարկում նորան, ուղում էր ունենալ նորա պատկերը: «Դրիբ Անանիալին, գրում է նա իւր եղբարը իւր նամակներից մէկում, որ ես տեսնուեցալ մեր լարգելի ու միշտ ազնիւ բարեկամ պ. Նազարեանցի հետ և որ նա խօստացաւ ինձ ուղարկել Ճեղիալի պատկերը:

Հանգուցեալի այդ վերջին խօսքերը կարող են ամենափայլուն ապացուց համարուել, որ նա այն նամակը, որից մենք տեղեկութիւն ենք ստունում նորա ու նազարեանցի մէջ պատահած գժութեան մասին, գըրել է գրգռուած բոպէի ազդեցութեան ներքոյ, և որ նա երբէք չի կասկածել, որ Նազարեանցն անպայման մաքուր է եղել թէ Հիւսիսափալի հաշիւների մէջ և թէ ընդհանրասկէս դրամական ամեն մի հաշուի մէջ:

Դորանից հեշտ է եզրակացնել, որ բոպէի ազգեցութեան տակ են գրուած և նոյն նամակի «Դրիչս պիտի կոտրեմ ու ձկեմ» միւս անգամ Հալոց ազգի անունը տուած ժամանակները ևս պիտի սիրու խառնուի և փոխելիքս գոյի: Ափսոս ինձ, որ ես երևեցալ Հալերի մէջ, մի ալ ազգի մէջ երբէք այս վիճակում գտանվելու չէի ես և այլն խօսքերը: Ինչպէս լալտնի է, յետոյ էլ նա գրեց, յետոյ էլ նա իւր բոլոր կեանքը նուիրեց ազգի օգտին ու շահերին ծառալելու գործին, յետոյ էլ վերջապէս, նա իւր գրիչը գործ գրեց ազգի պատիւը պաշտպանելուն օտարների լարձակումների դէմ և պատուով, առանց ցաւելու, որ ինքը հալ է ծնուել, կըց հալ անունը<sup>6)</sup>:

<sup>6)</sup> Բացի դորանից, Նալբանդանցի մտերիմ ընկերնե-

Նալբանդյանցի հետ տեսակցութիւն էին ունենում, ինչպէս ասացինք, թէ նորա մշտապէս Պետերբուրգում ապրող և թէ ժամանակաւորապէս այնտեղ եկած բարեկամները, ծանօթները և ընկերները։ Պետերբուրգում ապրողներից սովորաբար տեսնուում էին նորա հետ Յովհաննէս Սարհատեանը, Կարապետ Եզեանը, գեներալ Սիմէօն Սուլթանշահը, չենք խօսում արդէն հանգուցեալի եղբօր Ղազարոսի մասին, որ նորա արգելուելուց յետոյ, այնքան յաճախ էր պատահում մայրաքաղաքում և իւրաքանչիւր անգամ էլ այնքան երկար միջոցներով էր ապրում այնտեղ, որ նոյնպէս կարող էր մշտապէս Պետերբուրգում ապրողների թուին պատկանել։ Նա սիրում էր ալդ տեսակցութիւնները և անհամբերութեամբ սպասում էր տեսակցութեան համար նշանակուած օրերին ու ժամերին։

Երբեմն միայն, երբ նա տկար էր լինում, ուզում էր նա իսպառ մենակ մնալ և չէր ախորժում, չէր ձըգտում մինչեւ իսկ իւր մօտիկների հետ տեսակցութիւն ունենալ, մի կողմից տրամադրուած չլինելով, միւս կող-

---

րից է եղել նոր Նախիլմանցի թօ. Յովհաննէս Պետերբուրգը, նորա ժամանակակից և ծանօթ ուսանողներից է եղել Նոր-Նախիլմանցի թօ. Իսահակ Ալաջալեանցը, նորա բարեկամներից են եղել և Շամախսեցի Սաղա Ալէքսանդրեանը, Նոր-Նախիլմանցի Կամենչչիկովը Հայրապետեանը, Թորոս Կարակաչեանը, որոնց անունները լիշում են նորա նամակներում։ Առաջն երկուսն ալժմ էլ կենդանի են և ապրում են Նոր-Նախիլմանում, իսկ միւսները վախճանած են։ Սաղա Դաւթեան Ալէքսանդրեանը գէտի լիւտերականութիւն հակուած Շամախսեցիներից մէկն էր, որ ապրում էր Մոսկուալում և պարապում էր առետրուկան գործերով, նորա անունը լիշում է Հիւտիսափակում Զէրքէղեանի գէմ գրուած մի բողոքագրի մէջ։ Մոսկուալում էր մշտապէս ապրում և կամենչչիկովը, որ հաստ, դանդաղաշարժ և հանգստութիւն սիրող մի մարդ է եղել։ Նըրդա մենանում է, զորա բարեկամները զիմում են Ա. Շահազիկեանին, որ նա մի բան զրէ իբրև տապանագիր նորա գերեզմանի համար։ Նա էլ գրում է հետեւեալ շատ բնորոշ շորտով, որ լարտնի բան է անլարմար է համարւում տապանագիր համար։ Նա անշարժ էր ծնած օրից բայց մահը խիստաշարժեց տեղից և փափազող հանգստեան, դէմի անշարժ գերեզման։

մից էլ վախենալով վտանգի ենթարկել իրեն տեսակցութեան համար զուրս գալու ժամանակ: 1863 թուի մարտի 2 ին իւր եղբօրը գրած նամակներից մէկում մենք այդ մասին, օրինակի համար, կարդում ենք հետևեալ տողերը, որ նա գրում է իւր հիւանդութիւնը նկարագրելուց յետով. «Այս շաբաթի ես ոչ մի անգամ չափսուեցի, որ մենք զրկուած ենք տեսակցութիւնից, որովհետև հազիւ թէ կեանքս վտանգի ենթարկէի և դուրս գայի տեսակցութեան»...

Յովհաննէս Սարհատեանը Նոր. Նախիջևանցի էր: Նալբանդեանցն այնքան պատւում ու սիրում էր Նորան, որ ուրիշ պէս չէր կոչում նորան, բայց թէ Յովհաննէս եղբայրա: Ալդ Սարհատեանը մի երաժշտասէր մարդ էր: Նա նուրբ ճաշակ ունէր, սիրում էր թատրոնական գործը, նամանաւանդ իտալական օպերաները, ինքն էլ նուագում էր և ազատ կարգում ու ձայնագրում: Նալբանդեանցը, որ նոյնպէս մի մելոման էր և սիրահար իտալական օպերաների, նամանաւանդ Տրովատորի և Ռիգոլետտոյի, դեռ առաջ ծանօթացել ու մտերմացել էր նորա հետ: Նա, որ իւր ազատ եղած ժամանակը շատ անգամ էր նորա հետ թատրոն գնացել և նորու ընկերական շրջանում բազմիցս էստետիքական բաւականութիւն ստացել, այժմ էլ շարունակում էր հետաքրքրութել նորա երաժշտական պարապմունքով: Նորա խնդիրքով ու լորդորանքով էր, որ Սարհատեանը ձեռնարկել էր ուսանելու իտալական լեզուն և թարգմանելու Տրովատորը հայերէնի, որ ալդ ժամանակներն արդէն վերջացրած լինելով, լանձնել էր տպագրութեան: Նալբանդեանցը սիրում էր նորա հետ տեսակցութիւն ունենալ, խօսել նորա հետ իւր սիրուն երաժշտութեան մասին: Նա աշխատում էր խրախուսել նորան և շարունակել տալ նոյն գործը: Նա նորա հետ միասին ուրախանում էր նորա լաջողութեան վերալ և շատ արտմում էր, երբ լսում էր, թէ Տրովատորի տպագրութիւնը դանդաղ է ընթանում: Նա, երբ Սարհատեանն ուշանում էր մի քանի անգամ իրար վերալ տեսակցութեան դալու, խնդրում էր եղբօրը, որ բարեկ նորան, սեղմէ նորա ձեռքը և լիշեցնէ նորան, որ իրեն չմոռանալ: Եւ

երբ որ իմանում էր, որ նա չի գալիս, որովհետև պարապում է, մի նոր բան է պատրաստում, հրճում էր և խնդրում էր անհանգիստ չանել նորան, որովհետև ասում էր նա, գործն ամեն բանից առաջ. նա, երեխ, մի նոր սիւրպը է պատրաստում ինձ համար, որ չի գալիս: Եւ առհասարակ նալբանդեանցն իւր արգելանքի մէջ ոչ մի բանի այնքան չէր կարօտում, որքան երաժշտութեան. նա յաճախ երանի է տալիս իւր Պետերբուրգի բարեկամներին, որ նոքա միջոց ունէին լըսելու երաժշտութեան հրաշալիքները, իսկ ինքը, զըրկուուծ էր ոչ թէ միայն երաժշտութիւնից, այլ և մինչև իսկ կենդանի խօսք լսելուց: Նորա միակ երաժշտութիւնը եկեղեցու զանգակների տիսուր զօղանջիւնն էր, քայլ այն էլ միայն խուլ կերպով էր համանում նորա ականջին: «Ա՛խ, երբ կլինի, բացականչում է նա իւր նամակներից մէկում, որ ես լսեմ Տրովատորից իմ սիրած երգն «ՎԻՎԱ», երբ կլինի, որ ես Յովհաննէսին տսեմ. ահա և ես եկայ, գուցէ, զայ և ալդ ժամանակը, որովհետև, կրկնում եմ Պօն-Չեզարդէ Բազանի հետ միասին, աշխարհիս երեսին ամեն բան չափ ու սահման ունի, ամեն բանի վերջ կայ, և այն»<sup>7)</sup>:

Նոր-նախիջևանցի գեներալ Սիմէօն Սուլթանշահի հետ նալբանդեանցը ծանօթացել էր իւր Մոսկուալում եղած ժամանակները 1856 թուին, թէս, ինչպէս երեսում է, գորանից առաջ էլ նա նորա հետ, իբրև համաքաղաքացու հետ. հետաւոր ծանօթութիւնն է ունեցել: Հէնց առաջին անգամ նորա հետ ծանօթանալուց յետոյ, նա դիմել էր նորան Մոսկուալից մի նամակով և խնդրել էր, որ նա նըպաստէ «Նիւսիսափալլի» հրատարակութեան իրաւունքը շուտով ստանալու գործին, որի համար նալբանդանցը 56 թուին արդէն խնդիր էր մատուցել ուր հարկն է: Թէ որքան և բնէ չափով էր այն ժամանակները կարողացել

7) Յովհաննէս Սարհատեանի թարդմանած և երաժշտական, խաղերով աշխատասիրած Տրովատոր ողբերգութիւնը տալագրուել է Ռ. Պատկանեանի տպարանում և լուս է ընծարուել Պետերբուրգում 1864 թուին.

Փոքրիկ յառաջարանից սրնում է, որ նալբանդեանցի լորդորանքով է եղել այս թարդմանութիւնը:

Սուլթանշահը կատարել Նալբանդեանցի խնդիրը, — մենք չենք կարող ասել, բայց որ այդ ժամանակներից սկսուել էր նոցա մէջ նամակագրութիւն և բարեկամական յարաբերութիւն, որ իշխոլ հետզետէ զարգանալով, փոխուել էր մտերմութեան, այդ փաստ է: Գեներալը միշտ այցելում էր նորան, մխիթարում էր, իւր ձեռքից եկած դիւրութիւններն էր մատուցանում նորան, իսկ Նալբանդեանցն անդադար բարեւներ էր ուղարկում ռորին գերազանցութեան, նորա ընտանիքի անդամներին, զնորհակալութիւն էր լայտնում նորան իրեն ցոլց տուած համակրանքի համար, և այլն և այլն:

Նալբանդեանցը սիրում էր տեսակցել և պ. Կարապետ Եզեանցի հետ և, եթէ մի որ և է պատճառով նորա անելիք այցելութիւնը տեսակցութեան համար նշանակուած օրը տեղի չէր ունենում, նա այդ իւր համար զրկանք էր համարում, նեղանում, վշտանում էր նորանից: Իւր նամակներից մէկում նա այդ մասին, օրինակի համար, գրում է. «Եթէ Եզեանը կամենում է ինձ տեսնել, թող առալժմ յետաձգէ իւր անելիք ալցելութիւնը վարդապետին և իմ մօտ գալ. ես գիտեմ, որ նա հինգշաբթի, երբ նշանակուած է մեր տեսակցութիւնը, կամենում է նորա մօտ գնալ: Ես առանց այն էլ ձանձրանում եմ և համարում եմ իմ օրերը, երբ կտեսնեմ կենդանի մարդ և մի վայրկեան, գոնէ, կլում կենդանի խօսք իմ սրտիս մօտ մարդկանցից, իսկ նա դեռ վարդապետի զնորհիւ մի օրով յետաձգում է» Այդ նորա կողմից լաւ չէ:

### Գլուխ Դ.

Բացի իւր մտերիմների և բարեկամների մասին ստացած տեղեկութիւններից, Նալբանդեանցը Սուլթանշահից և իւր եղբօրից յանախ տեղեկութիւն էր խընդրում և ստանում թէ հալ և թէ ընդհանուր կեանքում կատարուող հասարակական գործերի մասին և հալ և ընդհանուր գրականութեան մէջ տեղի ունեցող նշանաւոր երեսովների մասին, առանց օրի նա չէր կարող ապրել, նորա կեանքն իսպառ գտարկ ու

անրովանդակ կլիներ, նա գլխաւորապէս հետաքրքրւում էր նախիջևանի եկեղեցական փողերի և իւր գէպի Հընդկաստան կատարած ճանապարհորդութեան վերաբերեալ գործերով, որոնց տաթիւ եղած խռովութիւնները նորա կոլանաւորուելուց յետով, աւելի սուր բնաւորութիւն էին ստացել նոր նախիջևանի հասարակութեան մէջ. նա հետաքրքրւում էր հայ լրագրութեան և ընդհանրապէս հայ մամուլի գործերով, որոնք շատ էլ լազող ընթացք չունէին նորա սիրած «Հիւսիսափայլի» դադարելուց յետով. նա հետաքրքրւում էր և բնական գիտութիւնների լուսադիմութեան գործով և այդ աշխարհում կատարուող ու կատարուած երևոյթներով, ինչպէս, օրինակ Մակուայի կենդանաբանական ու բուսաբանական պարտէզի բացուելը, բնութիւնը հետազօտողների, կենդանիների օդընտելուզման և պարտիզպանութեան ընկերութիւնների գոյութիւնը և լառաջադիմելը, որոնք նորա կարծիքով տեսական գիտութիւնը մօտեցնում են ժողովրդին, գործնական են դարձնում և ծառայեցնում են նորա օգտին՝ նորա կետնքը բարւոքելու համար: Նա լսելով, որ իւր կալանաւորութիւնը և Հնդկական գումարի համար հաշիւ չներկայացնելն այն աստիճան գրգռել են հակառակ՝ «Խալիքեան» կուսակցութեան զալրոյթն ու կրքերը, որ նոքա սկսել են բամբասել նորան, սկսել են երկմտել, կասկածել նորա ազնւութեան ու հաւատարմութեան վրայ և հասարակական փողերի վատնող, սեպհականացնող գուրս բերել նորան միամիտ ժողովրդի առաջ, այնպէս որ մինչև իսկ քաղաքագլուխ Հայրապետեանը ստիպուել էր հասարակական ժողով գումարել և բոլորի առաջ ցոյց տալ կատաղած Ալաջալեաններին և Խաթրանեաններին Հնդկաստանից բերած և Խտալիայում իտալական արքունի արժէթղթերի փոխուած փողը, շտապում է իւր եղբօր ձեռքով նախապէս ուղարկել Հայրապետեանին գործին վերաբերեալ գլխաւոր վաւերաթղթերը, մինչև որ ինքն ազատուէր և մանրամասն հաշիւ ներկայացնէր հասարակութեան իւր արած ծախսերի, իւր կատարած գործերի և պատգամուրութեան գործունէութեան մասին: Այդ առթիւ էլ

նա մի ընդարձակ թուղթ է գրում Հայրավետեանին, որով մի կողմից նա իւր զարմանքն է լայտնում, որ նա, Հայրապետ եանն այնքան թուլացել է, այնքան ենթարկուել է հակառակ կուսակցութեան ազդեցութեան, որ մինչև իսկ ամօթ չի համարել իւր անուան համար ցոյց տալ. «Ալաջալեանին և ընկերութեան»<sup>8)</sup> իւր ըերած իտալական արժէթղթերի տոմսակները, միւս կողմից էլ նա չի ծածկում, որ Սլաշալեանի և ընկերութեան վարմունքը մեծ ցաւ է պատճառել իրեն, և այդ ոչ թէ նորա համար, որ նոքա իւրեանց այդպիսի վարմունքով կարող էին ձգել նորա վարկը, այլ որ նոքա գեռ մինչև այդ ժամանակն էլ, երբ ինքն արդէն կալանաւորուած էր, չէին հանգստացել:

Ամբողջ քաղաքին էլ լայտնի էր, որ չէր կարողացել, ժամանակ չէր ունեցել հաշիւ պատրաստել ու ներկալացնել հասարակութեան, որովհետեւ նա իւր նախիջեան ժամանելու չորրորդ օրն արդէն կալանաւորուել ու տարուել էր Պետերբուրգ, թէև ինքն այդքանի օրն էլ ձեսքերը ծալած չէր նստել, հանգստացել, այլ հետեւ էր հաշիւը պատրաստելու և այդ հաւատեսութեան գործողութիւնը կատարելու համար հասարակական ժողով գումարել տալու։ Ստկալն նա գիտէր և զգում էր, որ եթէ նորան լաջողուած իսկ լինէր հաշիւ ներկալացնելու, այդ էլ ապարդիւն կլինէր. գորանով միայն նա բաւականութիւն տուած կլինէր պ. Ալաջալեանի գատարկ հետաքրքրութեանը, որովհետեւ նոքա, Խալիբականներն այն տեսակ մարդկանցից էին, որ երբէք չէին մատճիլ խեղճ հասարակութեան օգտի մատին։ Ապացոյց գորան, նորա կարծիքով, կարող էր ծառալել դոցա, այդ կուսակցութեան նախկին խղճուկ կառավարութիւնը, երբ նոքա օգտուելով հանգամանքից և ի չարն գործ դնելով խեղճ ժողովրդի պարզութիւնը, միամտութիւնը, ծածկում էին իւրեանց փարիսեցութիւնը, եսը և շահամոլութիւնը սրբութեան դիմակի տակ։

<sup>8)</sup> Նալբանդեանցը Խալիբի կուսակիցներին կոչում էր նոցա գլխաւորի անունով ապ. Ալաջալեան և ընկերութիւն առ Դեգլանի պեյսվել։

Քոցա իդէալը և կիսաստուածը—Խալիբը 12 տարի,  
առանց հսկողութեան, առանց հաշուետութեան, կա-  
ռավարել էր քաղաքը և ալդ միջոցում ամեն տարի հա-  
սարակութիւնը զանազան տեսակ հարկատւութեան էր  
ենթարկուել, չենք ասում արդէն այն, որ ունեցել էր  
ալ ևս հազարաւոր ուրիշ աղբիւրներ փող հաւաքելու  
համար։ Այժմ երբ արդէն այդ կուսակցութիւնը չէր գործի  
գլուխ կանգնածը և քաղաքը կառավարում էր Խալիբի  
տեղ Հայրապետեանը, քաղաքի բարեկարգութիւնը ո-  
չընչով պակս չէր Խալիբի ժամանակուանից, թէւ  
ծախսերն, եթէ չէին տւելացել, չէին էլ պակասել և  
թէւ չկար ոչ կամաւոր փողի աղբիւր և ոչ հարկա-  
տւութիւն։

Արժէր, որ հակառակ կուսակցութիւնն ալդ հան-  
գամանքի վրայ ուշադրութիւն դարձնէր և ոչ թէ իւր  
մեղմեխ բնաւորութեամբ ու վարմունքով առիթ տար  
Խալիբին եկեղեցական 200 հազար ուռելի փողը վատ-  
նելու։ Խալիբականները պէտք է զգոյլ լինէին և չվե-  
րանորոգէին հին ցաւերը։ Նալբանդեանցը հարստու-  
թիւն չունէր, բայց ունէր պատիւ, որ ոչ մի հարստու-  
թեան հետ չէր փոխիլ։ նա պատրաստ էր հէնց առա-  
ջին հնարաւոր եղած դէպքում մանրամասն հաշիւ ներ-  
կալացնել իւր ծախսած ամեն մի կոպէկի համար։ վատ  
չէր լինէր, որ նորա օրինակին հետևէին և խալիբա-  
կանները, որոնց ձեռքին գտնւում էին հասարակաց  
փողերը։

Առհասարակ խալիբականների ցոլց տուած եռան-  
դը հնդկական գումարի վերաբերմամբ կասկած էր ձը-  
գում Նալբանդեանցի սիրտը։ նա մտածում էր, թէ ար-  
դեօք չե՞ն ցանկանում նոքա և ալդ գումարը ձեռք ձը-  
գել և գործ գնել իւրեանց շահամոլութեանը բաւարա-  
րութիւն տալու, ինչպէս որ ձեռք էին ձգել և գործ  
դրել միւս գումարները։ Նա ուղարկելով վաւերաթղթերը  
և գորանից առաջ էլ իւր կալանաւորուելու ժամանակ  
յանձնած լինելով բերած փողերը Հայրապետեանին, պա-  
հանջում էր, որ քաղաքագլուխը՝ թէ ալդ թղթերը և  
թէ փողերն իւր մօտ պահէ և չտալ ուրիշներին, մին-  
չև որ ինքը վերադառնալ և հաշիւ տալ։ Փողերն ընտ-

բոււած մարդկանց ձեռքով պէտք է գործ դրուէին այն նպատակի համար, որ լայտնուած էր անդլիական «Սուպ-ըմ» — Կօրտի» դատավճուում, ապա թէ ոչ՝ ինքը քա-ղաքագլուխը և հասարակութիւնը պատասխանատու կմնալին վատնուած փողերի համար, որովհետեւ ին-քը խօսք էր տուել և երդում էր կերել կտակարարի կամքը սրբութեամբ կատարելու:

Նալբանդեանցին առանձին կերպով հետաքրքրում էր Նոր-Նախիջևանի եկեղեցական փողերի խնդիրը, որի պատճառով և առաջ էին եկել Խալիբեան և Հալրա-պետեան կուսակցութիւնները և դոցա մէջ եղած մըցո-ղութիւններն ու կոկւները, որոնց մասնակցել էր և ինքը, բռնելով Հալրապետեանի կողմը և պաշտպաննելով ժողովրդի շահերը: Նալբանդեանցը չէր ընդունում Դար-ըիշլ վարդապետ Ալվազեանի 1858-ին կալացրած հաշ-տութեան պալմաններն<sup>9)</sup> երկու կուսակցութեան մէջ։ Նա, ընդհակառակը, այդ հաշտութիւնը համարում էր մի նոր անիրաւութիւն և մի նոր բռնութիւն ժողովը-դի իրաւունքների և շահերի դէմ, աւելի մեծ, քան թէ գործել էր նոյն իսկ Խալիբը, հրաժարուելով իւր ձեռ-քին գտնուած եկեղեցական գումարների հաշիւր ներ-կալացնել ժողովրդին:

Նալբանդեանցն իւր եղբայր Ղազարոսից իմանտ-լով, որ Անդրէաս արքեպիսկոպոսն եկել է Նախիջևան եկեղեցական փողերի խնդիրը քննելու համար, շտապում է գրել առաջ իւր եղբօրը, իսկ յետոյ, երբ իմանում է Սուլթանշահի Նախիջևան հասնելը, և նորան, որ նոքա դիմեն իւր կողմից սրբազնին և խնդրեն յանուն ճըշ-մարտութեան խիստ քննութիւն կատարել և անիրա-ւոցի վատնած եկեղեցական փողերը յետ ստանալ Խա-լիբից և յանձնել ժողովրդին, որ ահա 15 տարի էր ինչ մաքառում էր դորա համար, բայց չէր կաբողա-նում ստանալու Ալդ փողերին, որի քանակութիւնը նա համարում էր 200 հազար ռուբլի, նա ալդ ժամանակ-

✓ 9) Ալվազեան վարդապետի 1858-ին կալացրած պալման-ների մասին տես «Պատմութիւն Խալիբեան Ռւսումնարանի» Գլուխ Դ, էջ. 34—44:

ները նամանտւանդ մեծ նշանակութիւն էր տալիս, որովհետև Հնդկաստանից իւր ձեռքով բերուած Մասեհ Բարաջանի գումարը բաւական չէր համարում կտակի և անգլիական դատարանի վճռի մէջ լայտնուած նպատակի իրագործման համար։ Յիսուն հազարի տոկոսիքը կամ, լաւ է ասել, նորա մի մասը, ի հարկէ, բաւական չէր Սահակ-Մեսրոպի անունով մի մեծ և կանոնաւոր դպրոց կամ ճեմարան պահելու և հարկաւոր էր կամ սպասել, որ այդ գումարն այնքան աճի, որ նորա տոկոսիքը բաւականանալ ծրագրած դպրոցի բացման ու պահպանութեան համար, կամ հասարակութեան փողերից մի նոր գումար աւելացնել նորա վերալ և իսկոն բանալ։ Նալբանդեանցն ահա առաջարկում էր, որ դըպրոցն իսկոյն բացուի և, իբրև ապահովութիւն, Խալիբի ձեռքով վաժնուած եկեղեցական փողերը տօկոսով յետ պահանջուի և աւելացուի յիսուն հազարի վերալ։ Նորա կարծիքով այն 40 մարդը, որոնք Ալվագեանի և Խալիբի հրաւէրքով մասնակցել էին հաշտութեան գործին և իւրեանց ստորագրութեամբ վաւերացրել էին պայմանները, իրաւունք չունէին այդ անելու ոչ բարոյական տեսակէտից և ոչ իրաւաբանական։ Բարոյական տեսակէտից նոքա իրաւունք չունէին, որովհետև նախ, այդ պայմանագրով նոքա աւելի քիչ էին ստանում Խալիբից, քան թէ որ կարող էին և պէտք է ստանալին, երկրորդ, Խալիբեան դպրոցի հաստատութիւնն ու շինութիւնը, որ մտնում էր այդ պայմանագրի մէջ, ամենաւին չէր համապատասխանում նախիջեանի ժողովրդի շահերին։

Իրաւաբանական տեսակէտից նոքա իրաւունք չունէին, որովհետև նոքա ժողովրդի ներկայացուցիչներ չէին և ոչ մի լիազօրութիւն չէին ստացել ոչ մասնակցելու հաշտութեան գործին, ոչ էլ ժողովրդի անունից ստորագրելու և վաւերացնելու պայմանները։ 40 մարդու ստորագրութեամբ վաւերացրած պայմանագիրը մի որ և է իրաւաբանական ակտի զօրութիւն չէր կարող ունենալ, որովհետև նախիջեանում հասարակաց գործերը վճռուում էին քաղաքագլխի նախագահութեամբ կայացած հասարակութեան ժողովներում ձայների առա-

ւելութեամբ, իսկ այդ 40 մարդն ոչ ընտրուած էին. հասարակաց ժողովից և ոչ լիազօրութիւն ստացած ժողովրդի անունից հաշտուելու, կամ մի որ և իցէ պալմանաթուղթ ստորագրելու: ~~Ու~~ իցուք այդ 40 մարդը հարուստ էին, ազդեցիկ և իրանց համարում էին ամբոխից վեր կանգնած ազնիւ մարդիկ: Թող լինի ալդպէս, բայց նոքա չեն կազմում հասարակութիւն, նոցանից իւրաքանչիւրը կարող էր միայն մի մի ձայն ունենալ և ոչ աւելի, իսկ ինչ վերաբերում է ազնութեան, — օրէնքի տեսակէտից ազնիւ համարում են նոքա, որոնք հասարակաց ժողովի անդամ լինելու իրաւունքից զրկուած չեն, որոնք հասարակութեանցանկութեամբ ու վճռով արտաքսուած չեն հասարակութիւնից: Մենք հայերս ազնուական դասակարգ չունենք, կայսերաշնորհ հրովարտակով էլ արտօնութիւնները տրուած էին նախիջևանի բոլոր հայերին անխտիր, և ոչ թէ միայն հարուստներին, ազդեցիկներին ու իրենց ազնիւ համարողներին: Թէ և ալդպիսի ձևով ու ալդպիսի հանգամանքների մէջ կայացած հաշտութիւնը և նորա պայմանագիրն ոչ մի զօրութիւն չէր կարող ունենալ, բայց և այդ մինչև անգամ ներկայացուած էր Սինօդին աղաւաղօւած խմբագրութեամբ. նորա, ալսինքն Սինօդին ներկայացրած պայմանագրի խմբագրութեան մէջ չէր լիշուած այն հանգամանքը, որ ստորագրողներից ոմանք դըել էին պայմանագրի տակ իւրեանց ստորագրութիւնը պատճառաբանութեամբ կամ պայմանով — «Հիմնաւոր հաշտութեան յօժար եմ»: Ճիշդէ, նախիջևանի հասարակական ժողովներին ներկայ չէին գտնուում ամենքը, բայց այդ չէր նշանակում, թէ իրաւունք չունին ներկայ գտնուելու, թէ նոքա զըրկուած են քաղաքացիական իրաւունքից: Այդ բոլորովին կախեալ էր ամեն մի քաղաքացու յօժար կամքից: Մէկը դիցուք բացակայում էր մի ժողովից և ներկայ էր գըտնուում միւսին, երկրորդը, ընդհակառակը, ներկայ էր գտնուում առաջին ժողովին և բացակայում էր երկրորդից: Առհասարակ բացակայութիւնը կամ ներկայ գըտնուելը, լուսութիւնը կամ գոռում գոչում բարձրացնելն ապացուց չէր, թէ բացակայողը կամ լուսութիւն պահ-

պանողն աւելի պակաս իրաւունք ունի, քան թէ ներկալ գտնուողը և աղմուկ հանողը: Ֆրանսիացի նշանաւոր մաթեմատիկոս Պուասօնն երկար ժամանակ ֆրանսիական պալատի անդամ է եղել, բայց միայն մի անգամ է խօսել, այն էլ ասել է բարապանին, որ պատուհանը փակէ, որովհետեւ քամի էր փչում:

Ալտջալեաններն ու Խաթրանեանները, նորա կարծիքով, ոյժ տալով իւրեանց պատրոնին մերժելու ժողովը դիմումի իրաւունքը, գորանով արջի ծառալութիւն էին մտառւցանում նորան, որովհետեւ նա մեծ ծախսեր էր անում և դարձեալ հասարակական պարտապանի անուն էր կը կըում: Եթէ նա, ալդ ծախքերն անելու փոխարէն հասարակութեան պարտքը վճռըէր, և մաքրուած կլինէր պարտքից և՝ աղմուկը կդադարէր: Այդ թող մի փառաւոր դաս լինի այն մարդկանց համար, որոնք թողած ուղիղ ճանապարհը, իւրեանց գործունէութեան համար ծուռ ու նեղ շաւիղներ են որոնում: Աորանից գեռ. 4000 տարի առաջ Եգիպտոսում՝ ապացոյց է տրուած որ ուղիղ գիծը կարճ է ծոից: Խալիքեանները լամենայն դէսլո հասարակութեան մեծ վնաս էին տուել, որովհետեւ ենթադրենք, որ Խալիքը հենց դատարանով պարտապան ճանաչուէր, կարող էր նա վերադարձնել հասարակութեան իւր ամբողջ պարտքը: Նա 1856 թուին տուել էր Մագիստրատին՝ ի հաշիւ իւր պարտքին 64 հազար ռուբլի: Նա նորից հօ հատուցանելու չէր ալդ 64 հազարը: բայց բնչ եղաւ այդ գումարը, բնչ եղան այն փողերը, որ նա 1848—1856 թուերին պահ էր տուել Օդեսայի «Պրիկազ» օնց. Պրիզրենիա», չենք ասում արդէն այն, որ Խալիքը կարող էր իւր ունեցած չունեցածն ուրիշի անունով արած լինել: այն ժամանակ հասարակութիւնն ինչ կստանար:

Խալբանգեանցը խնդրում էր Սուլթանշահին, որ նա իւր անունից Անդրէաս եպիսկոպոսին դիմումներ ստելու հետ միասին, ուղարկէ վեհափառին և իւր կազմած յօդուածները և խնդրէ, որ նոցա մէջ յիշուած գումարների աղբեւրները լատկացուին Սահակ-Մեսրոպեան ճեմարանին: Խախիջեանը, նորա ասելով, պարտական չէր պահել «Թէոդոսիոյ անկելանոցը», որտեղ Խորէն-

Ներն երկու հազար էին ստանում.... Նախիջևանը պէտք է իւր շահերը զատէր «Թէոդոսիայի վերտեպից», իսկ յետոյ «աւանտիւրիստներն» ինչ որ ուզում էին, թող անէին, փոյթ չէր նախիջևանի հասարակութեան: Նալբանդեանցը կարծում էր, որ այս անգամ արդէն գործը լաջողութեամբ կվերջանար, որովհետև լսել էր, թէ եկած արքեպիսկոպոսն եռանդուն ու ճշմարտասէր մարդ էր, նա սպասում էր իր յուսով, սպասում էր շուտով ուրախ լուր ստանալու ալդ մասին իւր բարեկամներից, և, ինչպէս ինքը գրում է իւր նամակում, նա ալդ գործի մասին աւելի էր մտածում, քան թէ իւր չարաբաստիկ գործի մասին, որովհետև իւրն անձնական, անհատական բան էր, իսկ եկեղեցական փողերի խնդիրը վերաբերում էր ամբողջ հասարակութեան: Նալբանդեանցը իւր եղբօր նամակից իմանում է, որ Ռաֆայէլ Պատկանեանցը, որ փոքը ինչ առաջ սկսել էր Պետերբուրգում հրատարակել «Հիւսիս» ը, դադարեցրել է նորա հրատարակութիւնը և տպարանն էլ ծախուել է Ամիդիկի պարտքի տեղի: «Հիւսիսը» հրատարակում էր Ռաֆայէլ Պատկանեանցի եղբօր Յովհաննէսի փողով, նորա փողովն էին ապրում ալդ ժամանակները Պետերբուրգում և ինքը Ռաֆայէլն ու նորա ծնողները:

Յովհաննէս Պատկանեանցը միտկ դրական տիպարն էր բոլոր Պատկանեանց ընտանիքի մէջ: Նա գործնական ուղղութիւն ունէր, կեանքի մարդ էր և չէր հաւանում իւր բանաստեղծ եղբօրը, որին կացում էր «անխելք», «արսըք» և այլն: Այդ Յովհաննէսն իւր կարողութիւնը ձեռք էր բերել իւր ամուսնութեան շնորհիւ: Նա ամուսնացել էր տիկին Ամիդիկի քրոջ աղջկակ հետ և պ: Ամիդիկի մահից յետոյ, տէր էր դարձել նորա բոլոր կայքին՝ ծխախոտի գործարանին և խանութին: Նոյն Ամիդիկի ընտանիքին յետոյ փեսայացել էր իւր հօր, Տէր-Դաբրէէլի միջնորդութեամբ և Ռաֆայէլը, առնելով կնութեան իւր, տիկին Ամիդիկի հարազատ Օլգա աղջկան, թէև ալդպիսով Ռաֆայէլը դարձել էր իւր եղբօր քենակալը, կամ ալդպիսի մի բան և դորանով աւելի էր մօտեցել Ամիդիկի ընտանիքին, բայց

իրան հեռու էր պահել, չէր խառնուել ոչ նոցա գործարանի և ոչ խանութի գործերին։ Յովհաննէսն իւր խանութի ծխախոտի եարլիկները տպելու համար ունէր մի զի մագրական մամուլ Երբ որ Ռափայէլը և Տէր-Գաբրիէլը միտք են լղանում «Հիւսիսը» հրատարակելու, Յովհաննէսն աւելացնում է իւր ունեցածի վերայ և մի տպագրական մամուլ և շատ չնչին գնով ձեռք է բերում ալդ մամուլի համար Պետերբուրգում հին ժամանակներից գոյութիւն ունեցող մի տպարանի հայերէն տառերը։ Ղազարոս Աղալեանցի ձեռքով կարգի բերուած ալդ մամուլով ու տառերով առաջին անգամ տպագրում է «Պետրոս Մեծի պատմութիւնը»։ յետոյ նոր տառեր է ձուլում Լեմանի ձուլարանում և սկսում է հրատարակուել «Հիւսիսը»։ Տպարանի ծախուելը, «Հիւսիսի» դադարելը հետևանք է լինում Յովհաննէսի սնանկութեան, որ մասամբ առաջ էր եկել գործարանի այրուելուց, մասամբ էլ ուրիշ պատճառներից<sup>10)</sup>։

«Հիւսիսի» դադարելու լուրն առկիթ է տալիս նալբանդեանցին դատողութիւն անելու, իւր կարծիքն յայտնելու հայ լրագրութեան մասին ընդհանրապէս և մի քանի պարբերականների մասին մասնաւորապէս։ Հայ լրագրութեան անյաջողութեան մեղքի մի խոշոր մասը, նրա կարծիքով, պէտք էր վերագրել հայ խմբագիրներին, որոնք չէին կարողանում, չէին աշխատում իւրեանց հրատարակութիւնները հետաքրքիր դարձնելու ժողովը մեծամասնութեան համար։ «Ճռաքաղը»-ը, ի հարկէ, պէտք է դադարէր, որովհետեւ նորան չէին կարդում, «Ծիածանը» և «Մասեաց աղաւնին», «ալաթալովիքան դըրութեան» մէջ պէտք է ընկնէին, որովհետեւ դոքա թէ և բաժանորդներով չէին ապրում, բայց անհետաքը բարկան էին։ «Արշալոյս Արարատեանը» պիտի քարշ տար իւր թշուառ կեանքը միայն 24 բաժանորդով, որովհե-

<sup>10)</sup> Ռափայէլ Պատկանեանցի «Հիւսիսի» հրատարակութեան մասին մեր մէջ բերած տեղեկութիւնները մենք քաղում ենք չարգելի Ղազարոս Աղալեանի մի նամակից, որ նա իրեն լատուկ սիրելութեամբ, մեր խնդիրքով, գրել է մեզ ալդ մասին։

տե նորա խմբագիրը մի անազնիւ մարդ էր, և ալլն և ալլն:

Նալբանդեանցը շատ ցաւում էր, որ այլ ևս չէր հրատարակում համակրելի «Հիւսիսափալլը» և նորա տեղը բռնել էին «գրական թգուկ» Պատկանեանցը, «կաշառակուրծ» Վալտազարեանը, «աւանտիւրիստ» Ալվագեանը իւրեանց թերթերով և միւսները<sup>11)</sup>: Նա կարծում էր, որ այդ ժամանակները մի որ և է ամսագիր, կամ լրագիր, լինի դա քաղաքական, թէ զուտ գրական, կունենար լիակատար լաջողութիւն, չնայելով, որ մինչև այդ ժամանակ եղածները բոլորն էլ մեռել էին գրպանի բարակացաւից և խմբագիրները վհատել ու լուսահատուել էին. պէտք չէր միաւն, որ խմբագիրներն անտարբել գտնուէին կամ վերաբերուէին դէպի այն ժողովրդի շահերը, որի համար հրատարակում էին նոքաիւրեանց թերթերը: Ի՞նչ բան էր, օրինակի համար, «Արշալուս Արարատեան»-ը: Նալբանդեանցի կարծիքով, դա մի խալտառակ լրագիր էր, որ ընդամենը ունէր 24 բաժանորդ: Նորա խմբագիր Ղուկաս Բալտազարեանը միաւն ապրում էր ու պահում իւր հրատարակութիւնը, ստանալով թիւրքաց կառավարութիւնից 4,800 պիատը արը արձաթ և անդիմական կառավարութիւնից 60 ֆ. ստերլինգ, որի փոխարէն նա լրտեսի պաշտօն էր կատարում Տաճիկ կառավարութեան համար և իբրև թէ Անդիմական շահերն էր պաշտպանում Տաճկաստանում: Անդիմայից այդ երկելի խմբագիրը կարողացել էր պոկել այդ գումարը 40 թուին, մի լրտեսի միջոցով Պօլսի դեռապան Կանենգից, որ լատկացրել էր նորան այդ գումարը, մի կողմից կարծելով, թէ ալդ Բալտազարեանն իբրև ժուրնալիստ, մի որ և է ազգեցութիւն ունի

<sup>11)</sup> Նալբանդեանցն արտեղ իւր նամակում, որից մենք քաղում ենք նորա կարծիքներն ու զատողութիւններն հայ մամուլի մասին, խօսում է էջ թուականի մասին, երբ Հիւսիսափալլը դադարել էր: Այդ ամսագիրը, ինչպէս լալտնի է, սկսաւ հրատարակուել 58 թուի Յունվարից և դադարեց 62 թուի վերջին: Եթեու նա նորից սկսաւ հրատարակուել 64 թուի Մարտից և վերջնականապէս դադարեց նոյն թուի վերջին, ամրող ջացնելով իւր տարեկան համարները.

Հայերի մէջ, միւս կողմից էլ, իբրև ողորմութիւն։ Նա զարմանում էր, որ զմիւռնացիք աւելի լաւ մարդ չէին գտել պատգամաւոր ուղարկելու Շատանգութեան գործի համար Նախիջևան, քան թէ այդ ընտանիթշնամուն, որ հայերի բաղդից, ոչինչ էլ չունէր լրտեսելու, որովհետև նոքա բացի իւրեանց առեւտրից, ոչինչ չէին իմանում։ Նա իմանալով, որ այդ մարդը պատգամաւորութեան պաշտօնով արդէն հասել է Նախիջևան և սիրով ու պատուով ընդունուել է հասարակութիւնից և մինչև իսկ Տէր Մատթէոս աւագ քահանալի ընկերակցութեամբ այցելութեան է եկել իւրեանց տունը, գրում լայտնում է իւրաքիններին նորա ով և ինչ մարդ լինելը և խնդրում է, որ միւս անգամ այլևս ընդունեն նորան, լոյս լայտնելով միանգամայն, որ իւր միւս բարեկամներն էլ ծանօթանալով գործի հանգամանքին, խոյս կտան նորանից<sup>12)</sup>։

<sup>12)</sup> Արշալուս Արարատեանը մեր հին լրագիրներից ամենատարածուածը և ամենազիմացկունն է եղել։ Նա սկսուել է հրատակուել իբրև երկարաթաթերթ 1840 թուին ու շաբոնակուել է մինչև 1886-ը, ուրեմն ամբողջ 46 տարի, որ երկար ժամանակամիջոց է մեր լրագիրների համար։ Նորա խմբագիր հանգուցեալ ՚ուկաս Պալդազարեանն իւր ժամանակ եղել է Զմիւռնիակի կրթուած ու եռանդուն երիտասարդներից մէկը։ Նա զահերէց ու ղեկավար է հանդիսացել Մեսրոպեան վարժարանի և իւր հայենի քաղաքի միւս ազգակին հաստատութիւնների, Պալտազարեանի եռանդուն գործունէութեան ապացուց կարող է համարուել ան, որ ան աննպաստ ժամանակները նա կարողացել է ալդքան երկար ժամանակ պահպանել իւր թերթը և մինչև իսկ իւր սեպհական տպարանն ունենալ և նոյնը 1845 թուին մեծ հրդեհին զոհ զնալուց իւտու, կրկին վերանորոգել ու վերաբանալ։ Եւ առհասարակ Հ. Գրիգորիս Վ. Գալէմքարեանի իւր «Պատմութիւն» հայ լրագրութեան» երկասի րութեան մէջ արած «Արշալուս Արարատեան»-ի նկարագրութիւնը և տուած վկարութիւնը Պալտազարեանի անձի մասին զիսովին հակասում է Նալբանդեանցի ասածներին։ Մեզ թւում է, որ հանգուցեալ հրապարակախօսը չափաղանցնում է, ծալրակեղութեան մէջ է ընկնում։ Պալտազարեանն անկասկած չի եղել ոչ մատնիչ և ոչ լրտես։ Մենք աւելի ճշմարտութեան մօտեցած կլինենք, եթէ ասենք, թէ «Արշալուս Արարատեան» իւր ուղղութեամբ չէր համապատասխանում Հիւսիսափալլին։

## Գլուխ Ե.

Կենդանաբանութեան պարտէզի բացման լուրը, որ հաղորդում է նորան Ղազարոսը, առիթ է տալիս նորան իւր կարծիքը յայտնելու բնական գիտութիւնների և նոցա կեանքի համար ունեցած նշանակութեան մասին։ Նալբանդեանցին հետաքրքրում էր գլխաւորապէս ամեն մի բան, որ վերաբերում էր գործնական իրական կեանքին, որ նպաստում էր մարդու կենցաղավարութեան բարւոքման գործին։

Նա հակառակ էր ամեն մի գիտութեան, ամեն մի վարդապետութեան, որ միայն տեսական նշանակութիւն ունէր և անմիջապէս չէր շօշափում իրական կեանքը և չէր ծառալում նորա օգտին։ Այդ պատճառով էլ կենդանաբանական պարտէզի բացուելը շատ ուրախացնում է նորան, որովհետև նա գործնական խորհուրդ ունէր, նա նպատակ ունէր մօտեցնելու գիտութիւնը ժողովրդին և ընդհակառակը։ Դորձառնական կենդանաբանութիւնը և բուսաբանութիւնը, նորա կարծիքով, շատ կարևոր գեր ունին խաղալու ապագայում։ Թէ քաղաքատնտեսութիւնը և թէ գիւղատնտեսութիւնը առանց գործառնական կենդանաբանութեան և բուսաբանութեան, միշտ կմնան մեռեալ տառ և կնմանեն մի նաւի, որ զեկավարում ու առաջ է գնում առանց կողմնացոյցի։ Ճիշտ է, նորագոյն փիլիսոփայութիւնը, քաղաքատնտեսութիւնը գիտութիւն չի համարում, բայց ալստեղ կարևորն արն չէ, թէ նա գիտութիւն է, ինչպէս պնդում են մի քանիսը, կամ գիտութիւն չէ, ինչպէս ձգտում են ապացոյց տալ ուրիշները, այլ թէ ո՞րքան նա հարկաւոր է գործնական կեանքի համար, ո՞րքան նա նպաստում է մարդու կենցաղավարութեան բարւոքման, իսկ այդ կողմից նորա կարևորութիւնն ակներև է ու անժխտելի։ Ամեն մի գիտութիւն պէտք է օգտակար լինի մարդուն նորա գործնական կեանքում որովհետև մարդս չի կարող բարւոքել իւր կեանքը, մինչև որ նա չնուածէ շրջապատող բնութիւնը, մինչև որ չիմանալ նորա գաղտնիքները։ Ահա բնական գիտութիւնները դրականապէս համապատասխանում են, ծառալում են այդ նպատակին և այդ պատճառով էլ,

ուրեմն, նոյա ուսումնասիրութիւնն անհրաժեշտ է: Եւ առհասարակ բնութեան ուսումնասիրութիւնը, սոցիալական մտքով, մի մեծ խորհուրդ ունի, որովհետև նա մի մեծ, մի զօրեղ զէնք է տալիս մարդկութեան ձեռքը մաքառելու բնութեան դէմ և իշխելու նորա վերալ:

Առաջ բնական պատմութիւնը մի չոր ու ցամաք ֆորմուլալ էր, կեանքում գործադրութիւն չունէր, ուստի և նորան քիչ էին ուսումնասիրում, իսկ հին աշխարհում մինչև իսկ նա համարւում էր մի այնպիսի ցած և ստոր գիտութիւն, որ իմաստասէրներն անվայել էին համարում անգամ իւրեանց արժանապատութեան համար ուշադրութիւն դարձնել նորա վերալ, որովհետև նորա ուսումնասիրութեան առարկան, նիւթն էր առօրեալ կեանքն իւր շրջապատող բնութեան մէջ: Հին փելիուփաները սաւառնում էին օդի մէջ, բարձրս:նում էին երկինքը, զատւում, բաժանւում էին իրական կեանքից և ամեն մի նիւթից, որ վերաբերում էր կեանքին: Նոքա իւրեանց մտաւոր գործունէութեամբ ապրում էին վերացական աշխարհում: Կենդանաբանութիւնը և բուսաբանութիւնը գործնական դարձնելու գաղափարն, այսինքն բուսերի և կենդանիների օդընտելացումն առաջին անգամ իրագործուեց Պարիզում յալտնի Սենտ-Իլեր ժոֆրուայի ձեռքով ու աշխատանքով, որի համար Եւրոպայի հետ միասին և բոլոր աշխարհը պէտք է երախտապարտ լինի նորան: Նալբանդեանցն ամեն անգամ, երբ լսում էր օդընտելացման արած մի որ և է յառաջադիմութեան քայլի մասին, տխրում էր, որովհետև Կ. Ռունիէն, որ հետևելով և գնալով ժոֆրուայի ճանապարհով, դրել էր օդընտելացման հիմքը, առանց օգնութեան, սուղ միջոցներով հրատարակելով Շնական գիտութիւնների հանդէսը, այլ ևս չկար, որ տեսնէր իւր հիմնած գործի յաջողութիւնը և ուրախանար: Նա կարծում էր, որ, եթէ նա կենդանի լինէր, իւր ամբողջ կեանքը կանցկացնէր կենդանաբանական պարտէզում:

Նալբանդեանցը շատ ուրախանում էր, երբ Անանիալի նամակներից տեղեկանում էր, որ նա պարապում է Սաղմնախօսութեամբ. նորա կարծիքով, Սաղմնախօսութիւնը կամ էմբրիօգիան մի հոլակապ գիտութիւն

է և մեծ ապագայ ունի, թէս գեռ մանուկ է ու նոր  
է միայն աճում ու զարգանում։ Նա շատ էր ցաւում,  
որ ինքը շատ քիչ տեղեկութիւն ունի, շատ քիչ բան  
գիտէ ալդ գիտութիւնից և յօրդորում էր իւր ընկերոջը  
շարունակելու ալդ ուղղութեամբ պարապելը, որովհե-  
տեւ դա կարևոր է թէ բժշկական և թէ բնագիտական  
տէսուկէտից, և ինքն էլ խոստանում էր պարապել, երբ  
միջոց ունենար, երբ ազատուէր։ Նալբանդեանցը հետա-  
քըրքըւում էր և նարրաբաշխութեամբ։ Նորա կարծի-  
քով, քիմիան թէս գրական գիտութիւն է, բայց էմ-  
պիրիքական է։ Քիմիան կաղում է։ Նորա մէջ գեռ շատ  
բան մժութեան քօղով է ծածկուած, այնպէս որ շատ  
բանում մենք չենք կարողանում մեզ հաշիւ տալ, և  
բազմաթիւ ինչու, կամ ինչ հիման վերալ հարցերին  
մենք կամ ամենևին պատասխան չենք կարողանում  
տալ, կամ բաւականանում ենք մի այնպիսի մտշուած  
պատասխանով, որ ամօթ է մինչեւ անդամ կրկնել։ Մենք  
օրինակի համար, ասում ենք, որ իրը թէ «ատոմնե-  
րի» զանազան գասաւորութիւնից կախեալ է մի և նոյն  
քիմիական բաղադրութեան նիւթերի տեսակների տար-  
բերութիւնը, ինչպէս, օրինակ, քարիւղի, սաթի և միւս-  
ների։ Ցաւալի է, որ միկրոսկոպը դեռ բոլորովին կա-  
տարելագործուած չէ։ Եթէ տարրաբաշխութիւնը և խո-  
շորացոյցն այլ ևս առաջ գնալին, կատարելագործուէին,  
մարդու մտքի լաղթանակը կարելի էր վերջացած հա-  
մարել։ Եւ գլխաւորն այն է, որ զոքա, այսինքն տար-  
րաբաշխութիւնն ու խոշորացոյցը ներկայումս արդէն  
այնքան կատարելագործուել են, այնքան առաջ են գնա-  
ցել, որ համարեալ եկել, կանգնել են այն սահմանի  
վերալ, որտեղ վերջանում են սուտ իմաստականութիւն-  
ները և սկսում է նորը, ճշմարիտ աշխարհը։ պէտք  
է այլ ևս մի քանի քալլ, ոչ աւելի։ Նալբանդեանցը  
կարծում էր, որ քսաներորդ և յաջորդ գարերի մա-  
նուկը կժպտալ ինքնենիուախ, Լալուազիէի, Լիբեդի և  
Ֆրեզենիուախ միամտութեան վերալ, ինչպէս որ մենք  
այժմ ծիծաղում ենք հին ֆիլիսոփաներից մեծագոյնի՝  
Արիստոտելէսի վերալ, որ մարդուս ուղեղը համեմատում  
էր սպունգի հետ։

Նալբանդեանցը սակալն չէր բաւականանում միայն տեսականորէն իւր կարծիքը լատանելով, այլ աշխատում էր նոյն տեսութիւնն իւր բարեկամների ձեռքով մինչև իսկ իրագործել և գործնական կեանքում։ Նա Անանիալին խորհուրդ էր տալիս, որ նա հիմնաւորապէս և մասնագիտօրէն ուսումնասիրէ արուեստական կերպով ձկներ աճեցնելու եղանակը։ Նորա կարծիքով, այդ մի դժուար բան չէր, որովհետև բնախօսութիւնից մենք ամենքս էլ գիտենք այդ, միայն որ այդ մեր գիտութիւնը տեսական է, պէտք է գործնականը, որ մենք մեր ձեռքով ստիպէնք ձկներին կատարել այն ֆունկցիաները, որ նոքա կատարում են հեռու մարդկանց աչքերից, գաղտնի։ Նա կարծում էր, որ թէ Նախիջևանում և թէ ուրիշ հայաբնակ տեղերում, որտեղ միայն ձկնառատ գետեր, լճեր ու ծովակներ կան, կարելի է հեշտութեամբ աճեցնել «ասերլիազներ» և ուրիշ տեսակ ձկներ և գորանով ժողովրդի ձեռքը վաստակի ու ապրուստի մի նոր միջոց տալ։ Նա շատ ցաւում էր որ Անանիան չէր լսել իւր խորհրդին և չէր ուղարկել Նախիջևան կոչինչինալի հաւերի հաւկիթներ, որ այնտեղ աճեցնէին այդ տեսակ օգտաւէտ հաւերի ցեղը և տարածէին ամեն տեղ։

Նա Հնդկաստանից բերել էր իւր հետ Սօրգօ բոլիսի հունդը, որ իւր ձեռքով ցանէ, աճեցնէ առաջ Նախիջևանում, լետոյ և ուրիշ տեղեր։ Դժբաղդաբար նորա այն չամադանը, որի մէջ ամփոփուած էր այդ հունդը, կորել էր Սառուտգամպտօնում, ուր Բենգալիաից նա ուղարկել էր իւր բոլոր բագաժը, բայց դորանից նա չէր վհատել, նա ձեռնթափ չէր եղել այդ բոյսը Նախիջևանում աճեցնելու մտքից ու դիտաւորութիւնից, նա խնդրել էր իւր եղբօրը, որ նա լանձնարարէ Անանիալին գնելու Պետքրբուրգի և «Ճնտեսական ընկերութեան» գրասենեակից Սօրգօյի հունդ 2—3 մսխալ և մի 2—3 մըսխալ էլ նոյն հունդից, առնէ Մոսկուալի Ենութեան հետազօտողների ընկերութեան գրասենեակից, և երկու տեսակը միասին խառնելով, ամուր փաթաթած, որ ճանապարհին չսովի, ուղարկէ Նախիջևան իւր ընկեր Յովհաննէս Բերբերեանին՝ Հայրապետեանի Պօնի ափին

գտնուած պարտէզում ցանելու։ Նորա ասելով, այդ Սօրգովի երկու տեսակը կալ. դոցանից մէկը ըերւում է Զինաստանից, համարւում է ամենալաւը և կոչւում է «*Sorghum Saccharatum*», այսինքն շաքարի Ոօրգո։

Երկու առանձին տեղերից սերմ առնելը նա կարեռը  
էր համարում, որովհետև գիտէր, որ սերմերն իւրեանց  
ցանուած տեղի, հողի ու կլիմայի ազդեցութեան ենթար-  
կուելով, փոփոխութիւն են կրում իւրեանց ձևի մէջ և  
քիչ թէ շատ շեղում են սպորականից, որ, նորա ենթա-  
դրութեամբ, կարող էր փոփոխութիւն առաջ բերել,  
գուցէ, և նորանից, այսինքն այդ սերմից ապագայում  
աճելիք բոլոսի ու պտուղների կազմուածքի, օրդանիզմի  
մէջ։ Նալբանդեանցն այնքան երկար չէր մնացել Բննդա-  
լիայում, որ կարողանար համեմատել մի տարուայ հունձը  
միւսի հետ և նկատել մի որ և է Փիզիքական փոփոխու-  
թիւն նորա օրդանիզմի մէջ, բայց որ նոքա, սերմերն-  
իւրեանց ձևով փոխում են, նա այդ հաստատ գիտէր։

Նա կարծում էր, որ այդ Սօրգօն մի շատ օգտա-  
վետ բոլով է և կարող է լաջողութեամբ բանել նախի-  
ջեանում, որովհետեւ այնտեղ լաջողութեամբ բանում են  
խաղողը և եգիպտացորեանը: Ցանելն էլ, նորա կարծի-  
քով հեշտ էր. պէտք էր հողը խոր հերկել, լեռոյ խնամ-  
քով տափանել և լայնութեամբ ու երկարութեամբ բո-  
լոր մարգը մէկ կողմից 12 կանգուն հեռաւորութեամբ  
քաշուած գծերով բաժանելով աղիւսակի, գծերի իւրա-  
քանչիւր խաչ ընկած տեղում մի մի սերմ դնել ու ծած-  
կել հողով այսպէս:

ծլած ու նոր գուրս եկած ժամանակ թփերի մէջ պէտք է հողը փորել, քրքրել և մաքրել աւելորդ արօտներից, յետոյ հողը հաւաքել թփերի արմատների մօտ: Ցանքը պէտք է լինէր մարտի սկզբին—սովորաբար երկու շաբաթ առաջ այն թուից, որից յետոյ հաւանականաբար արգասառն կամ առաւօտեան սառնամանիք ալլ ևս չպէտք է որ լինէր:

Այսպէս կատարուած առաջին փորձը թէև անլաջաղ է լինում, բայց նա այնուամենալիւ ամենեկին չի վհատում, նա խնդրում է իւր բարեկամներին չլուսահատուել և նորից փորձը կրկնել, այս անգամ խրատալով հողը հերկել  $\frac{1}{2}$  գազ խորութեամբ և սերմի ամեն մի համարկը ցանել  $\frac{3}{4}$  կանգուն հեռաւորութեամբ միմեանցից: Ցանքն էլ նա խորհուրդ է տալիս անելու այս անգամ ոչ Մարտի սկզբին, ալլ Ապրիլի սկզբին, երբ արդէն վախ չի լինում շաղալից: Նորան հետաքըրքում էր գլխաւորապէս ալդ փորձերի հետեւանքը. նա ուզում էր իմանալ՝ ա) որքան ցողուն է տալիս իւրաքանչիւր սերմ, բ) ամեն մի ցողուն որքան հիւթ է տալիս, համեմատելով իւր քաշի հետ, գ) հիւթը, ըստ բաշէի, ինչ թանձրութիւն ունի և դ) քանի՞ տոկոս շաքարի քիւրեղ կայ հիւթի մէջ: Մնացեալը, այն է ուուբը և ոսմի քանակութիւնը, նա կարծում էր, որ կարելի է և չորոշել, որովհետեւ անբիւրեղ շաքարի յարաբերութիւնը դէպի քիւրեղները խոտոր համեմատական է, նոքա աւելանում կամ պակասում են ի հաշիւ միմեանց:

Սօրգօյից, Նալբանդեանցի ասելով, կարելի էր ստանալ և գեղեցիկ ծիրանի ներկ և թուղթ: Նա խորհուրդ էր տալիս ցանքն անել մի սամէնաչափ գետնի վերալ, որ մի որոշ արգասիք ստացուի. նորա գլխաւոր նպատակն էր շաքարը, իսկ ուուբը, ոսմը, ներկը և թուղթը նորա համար երկրորդական նշանակութիւն ունէին: Նալբանդեանցը Սուլթանշահի ուշադրութիւնը դարձնում էր և «Coccinella» կոչուած որդերի վերալ, որոնք ինչպէս յայտնի է, ապրում են կակտուսների տերեւների վերալ: Ալդ յայտնի որդան-կարմիրն է, որ լինում է և Հայաստանում, գլխաւորապէս Երասխի հովտում: Նա խորհուրդ էր տալիս Անանիալին ուսումնասիրելու

ալդ որդերի կետնքը և նոցանից ներկ ստանալու եղանակը, հարցնելով նոցա մասին բնախօսութեան ուսուցչապետին կամ բնութիւնը հետազօտողների ընկերութեան անդամներին և կամ տեղեկութիւն հաւաքել այդ մասին Օդընտելացման ընկերութիւնից, թէ նորան չաջողէր ալդ բոլոր ազգիւրներից հարկաւոր տեղեկութիւնները ժողովելու, նա խորհուրդ էր տալիս նորան գիմել Ս. Եշմիածին, որտեղ, երևի, դեռ կենդանի կը լինէին յայտնի ծաղկաբար Սահակ եպիսկոպոսի ժամանակակիցներից միաբաններ, որոնք անկասկած կիմանալին թէ հանգուցեալն որ բոլոսերի վերալ էր գտնում ցանկալի որդերը: Այդ Սահակ եպիսկոպոսը, ինչպէս յայտնի է, առաջինն էր եղել, որ ուշադրութիւն էր գարձրել Երասմի հովտում բանող այն բոյսերի վերալ, որոնց վերալ ապրում էին ալդ որդերը, և ուսումնամիջել, գտել էր նոցանից ազնիւ ներկ ստանալու ձեռն ու եղանակը: որի համար և լիսնական թուերին նա արժանացել էր ուսաց տէրութիւնից ցմահ կենսաթոշակ ստանալու: Նալբանդեանցը խորհուրդ էր տալիս ամեն բան տեղն ու տեղն ուսումնասիրելուց յետով, մի բրոշեւր հրատարակել Երևանի նահանգի գիւղացիների բարբառով և դորանով միջոց տալ հալ գիւղացիներին մի նոր պարապմունք և վաստակի մի նոր աղբիւր ձեռք բերել:

Նալբանդեանցը հետաքրքրում էր իմանալ, թէ ինչ բան է Ս. Կարապետի մաստակը և չի կարելի արդեօք ալդ ձիւթիւ տեսակից պատրաստել զանազան անուշահոտութիւններ: Նա գտել էր ալդ մաստակի լատինական անունը՝ «Doremā armeniacā» և ինդրում էր իւր ենթադրութեան մասին հարցնել իմանալ ուսուցչապետ Գեղարտովսկու կարծիքը. Նա հետաքրքրում էր շերամապահութեամբ և խնդրում էր, որ իւր համար ուսաց լեզուով մի կարգին ձեռնարկ գտնեն, ուղարկեն այդ ձիւղին վերաբերեալ, նա, վերջապէս, հետաքրքրում էր Հայոց աշխարհի տորոնից ցանքսերով և գլտորով և ձգտում էր ուսումնասիրել, իմանալ, թէ ինչպէս և ինչ միջոցով կարելի է օդընտելացնել Փրանսերէն «Ծոփիր» և ուսուե-

բէն Օրքատօրքա կոչուած պատենաթև միջատը, որ  
լինում է Փոքր Ասիայում։ Նա թէ իւր տեսակցութիւն-  
ների և թէ իւր նամակների մէջ արդ ժամանակները  
միշտ կրկնում էր, թէ մենք արխատոկրատ չենք, որ  
ձեռքներս ծալած նստենք, մենք պէտք է աշխատենք  
ու աշխատենք. իսկ իւր ընկեր Սուլթանշահին լատկա-  
պէս գրում էր. «Զէ որ պէտք է պարապել գիտութեամբ.  
ինչ է այն բժիշկը, որ միայն միակողմանի բժշկութեամբ  
է պարապում, մի արհեստաւոր, որ պարապում է իւր  
արհեստով. կենդանիների և բոլորի օդընտելացումը,  
նորա կարծիքով, մի նոր ազրիւր է մարդու կենցա-  
ղավարութիւնը բարւոքելու համար։ Առաջ արդ նպա-  
տակին ծառալում էին միայն աշխատանքն ու հողը,  
իսկ ալժմ դոցա օգնութիւն է գալիս և երրորդ աղ-  
բիւրը—օդընտելացումը, որ առաջին երկուսի օգնու-  
թեամբ նոյնպէս ծառալում է նոյն նպատակին։

Գործնականին է վերաբերում և հանգուցեալի ձըգ-  
տումը մօտ լարաբերութիւն կապելու Մոսկուայի կենդա-  
նաբանական պարտէզի և Օդընտելացման ընկերութեան  
վարչութիւնների հետ՝ նոցա գործնականապէս ծառալելու  
և օգտաւէտ լինելու նպատակով։ Նա այնքան համա-  
կրում էր դոցա, որ գեռ իւր բանտարկութիւնից առաջ,  
Հնդկաստանի ճանապարհորդութեան ժամանակ, բենգա-  
լիալից բերել էր մի ընտեր ոնգեղջիւր Հայրապետեանի  
ծախչով և նորա համաձայնութեամբ նուիրել էր նորան  
կենդանաբանական պարտէզին։ Նա այն ժամանակ կա-  
մեցել էր բերել նոյն պարտէզի համար և մի զոյգ լաւ  
արքայավագը, բայց չէր կատարել իւր գիտաւորութիւնը,  
կամենալով նախապէս սպասել և իմանալ, թէ ինչ  
գնահատութիւն կլինի բերած ոնգեղջիւրի համար։

Ալժմ էլ, երբ արդէն չէր կարող ազատ գործել,  
չէր ուզում դարձեալ ձեռնթափ լինել նոյն գործից,  
նա լանձնարարում է Անանիային անձամբ տեսնուել  
Մոսկուայում կենդանաբանական պարտէզի տնօրէնների  
և Օդընտելացման ընկերութեան վարչութեան հետ և  
իւր անունից բանագնացութիւն անել նոցա հետ, առա-  
ջարկելով իւր ծառալութիւնն՝ Ասիալից և Աֆրիկէից  
զանազան ընտեր կենդանիներ ու գաղաններ բերելու

Դորա փոխարէն նա պահանջում էր, որ Օդընտելացման ընկերութիւնը չզլանայ մատուցանելու իրեն իւր բարոյական աջակցութիւնը: Իրեն Նալբանդեանցին իսկապէս, ինչպէս ինքն ասում է, հարկաւոր չէր ոչ բարոյական և ոչ նիւթական օգնութիւն, որովհետև ինքն ինչ որ արել էր և ինչ որ միտք ունէր անելու յօգուտ վերոլիշեալ հաստատութիւնների, արել էր յօժարակամ, սիրելով, կամենալով դորանով նպաստել և իւրովսանն ծառալել գիտութեան. բայց նա այդ աջակցութիւնը հարկաւոր էր. համարում այն մարդկանց համար, որոնք անտարբեր էին դէպի գիտութիւնը և միայն կարող էին զոհաբերութիւն անել այդ նպատակի համար, եթէ մի որ և իցէ բանով խրախուսուէին, վարձատրուէին ընկերութիւնների կողմից: Փոքը զոհաբերութիւն չէր պահանջուածը. ունգեղջիւրի բերելը Հայրապետեանի վելալ նստել էր 10 հազար ոտուրի:

Եթէ Օդընտելացման ընկերութիւնը համաձալնէր օգնելու, Նալբանդեանցը խոստանում էր, իւր ազատուելուց մի տարի լետոյ, հասցնել Մոսկուա և՝ վագր, և՝ ձիագետի, և՝ մանր կենդանիների մի ամբողջ խումբ, որ ոչ մեծ ծախսի բան կլինէր, ոչ էլ զժուար նորա համար, որովհետև նա աշխարհիս բոլոր մասերում ունէր գործակալներ հայերից, որոնք սիրով կաստարէին, իւր ասելով, նորա բոլոր լանձարութիւնները: Նա կարծում էր, որ վերոլիշեալ հաստատութիւնների վարչութիւնները շատ սիրով պէտք է ընդունէին իւր առաջարկութիւնը, որովհետև նա իւր այդ առաջարկութեամբ ոչ մի բանով չէր ծանրաբեռնում ընկերութիւնները, այն ինչ նոքա նորա միջնորդութեամբ ձեռք էին բերում մի միջոց հեշտութեամբ բաւականութիւն տալու իւրեանց կարիքներին, ծանօթութիւն կապելով աշխարհիս բոլոր մասերի հետ և հեշտութեամբ ստանալով այն տեղերից իւրեանց ցանկացածը<sup>18)</sup>:

<sup>18)</sup> Մենք Նալբանդեանցի Հնդկաստանից բերած ոնդեղիւրը տեսել ենք Մոսկուալի կենդանաբանական պարտէզում: Նորա գառագիղի վերաբ, որքան մենք լիշում ենք, կախուած էր մի տախտակ, որի վերաբ ուստերէն խոշոր տառերով գրուած

ԴԼՈՎԻՆ Զ.

Նալբանդեանցն ընդհանրապէս շատ սիրում էր կարդալ, նա, ինչպէս յալտնի է, ոչ մի միջնակարգ գպրոցի կանոնաւոր դասընթաց չէր անցել, այլ իւր բոլոր գիտութիւնը ձեռք էր բերել ինքնուսութեամբ և գլխաւորապէս ընթերցանութեամբ։ Գիրքը նորա թոյլ կողմը, թոյլ երակն էր. նա այն աստիճան սիրում էր գիրքը, որ չնայելով իւր սուղ նիւթական միջոցներին, կարելի է ասել, իւր բերանից կտրելով, կազմել էր՝ գլխաւորապէս գիտական ուղղութիւն ունեցող գրքերից մի համեստ մատենադարանն, որ վերջին ժամանակները մասսամբ նորա ճանապարհորդութեան, մասսամբ էլ յաճախ տեղից տեղ փոխուելու պատճառով յրուած մնացած էր սորտ նորա մօտ և շատ գիրք էլ կորել անլայտացել էր։ Այնու ամենայնիւ չնայելով այդ հանգամանքին, նորա մահից յետոյ մնում է գրքերի մի համեստ հաւաքածու, որ կազմուել էր նորա բանտում եղած ժամանակ և որ կամիշինից բերուելով նախիջևան նորա միւս իրեղէնների հետ միասին, յանձնում է նորա ժառանգներին։ Բաւական չէ, որ նա իւր սուղ միջոցներով գնում էր այս կամ այն գիրքն ուղղակի իւր բնակած տեղի գրավաճառանոցներից, կամ բերել էր տալիս ուրիշ քաղաքներից, ինչպէս հայոց գրքերը Վենետիկից, այլ և նա սովորութիւն էր արել բաժանորդ գրուելու պարբերաբար մի քանի հատորով գուրս գալիք գրքերի։ Նա յաճախ գանգատուում էր, որ մեզանում գրքերը շատ թանգ են և չքաւոր մարդիկ համարեած թէ միջոց չունին իւրեանց ցանկացած գիրքը ձեռք բերելու։ Նորա կարծիքով, եթէ Ուուսաստանում մի աղքատ գրագէտ, մի գրականութիւն սիրող մարդ ուզենալ մի համեստ մատենադարան կազմել իւր համար,

Էր մատաւորապէս հետևեալը. «Ո՞նդեղիւր, բերուած Հնդկաստանից Միւսաւէլ և աղարիչ նարանդեանցի ձեռքով և նորիրուած պարտէզին նոր-Նախիջևանցի Կարապետ Մակարիչ Հալբապետեանից»։

անպատճառ կզրկուի իւր աւուր պարէնից և սովից ու քաղցից կմեռնի։ Այս ալսպէս լինելով, կարելի է, ուրեմն, երևակալել, թէ ինչ գին պէտք է ունեցած լինի ալսպիսի գրասէր մարդու համար գիրքն արգելանքի մէջ։ Կարելի է առանց սխալուելու ասել, որ այդ ժամանակները գիրքը նորա ամենամեծ միաթարութիւնն է եղել։ Նա հէնց իւր բանտարկութեան առաջին օրերից խնդրել էր կամենդանտից և ձեռք էր բերել իրաւունք իւրալիններից գիրք ստանալու և կարդալու։ և նա անլազաբար կարդում ու կարդում էր։ Նա այն աստիճանի ի չարն էր գործ դրել այդ միաթարանքը, որ վերջերն այլ ևս չէր կարողանում կարդալ մանր տառերով տպուած գրքերը, որովհետև աչքերը փշացել էին։ «Մակոլէլը կկարդամ, ըստ սովորութեան, ախորժակով, գրում է նա այդ մասին իւր նամակներից մէկում, ինչ եղաւ նորա պատմութիւնը, մբթէ դեռ դուրս չի եկել. այս երրորդ հատորն էլ ալնպիսի մանր տառերով է տպագրուած, որ աչքերս ցաւեցնում է։ 8 ամիս գիշերցորեկ կարդում եմ, սորան աչք կդիմանալ։ Բայց գորանից հրաժարուել չեմ կարող, որովհետև այդ իմ միակ զբաղմունքս է»։

Վէպերից նա զգուել էր, բառարաններից սիրաը խառնում էր. նա խնդրում էր, որ իրան ուղարկեն գլխաւորապէս այնպիսի գրքեր, որ մի կողմից զբաղեցնեն իրեն, միւս կողմից էլ շահեկան լինին ու բաւականութիւն տան նորա հարցասիրութեան։ Նորան ուղարկում էին նոշշէն, Մակոլէլը, Շլօսէրը, Գերվինուսը, Բոկլը, Եէրը, «Հանրագիտակ բառարանի» նորան հետաքրքրող հատորները, և այլն և այլն։

Նա այդ գրքերը կարդում էր ուշադրութեամբ և վերադարձնում էր, յալտնելով նոցա մասին իւր կարծիքը, հայեացքները։ Գրքերից մի քանիսին նա այնքան հաւանում էր, որ երկար պահում էր իւր մօտ. նա այդ գրքերն ոչ միայն կարդում էր, այլ և, ինչպէս ինքն ասում է, ուսումնասիրում էր։ Նա սիրում էր ընդհանրապէս գործնական, իրական ուղղութիւն ունեցող գրքեր կարդուլ և խուսափում էր փիլիսոփալութիւնից, իմաստասիրական ուղղութիւն ու բովսնդակութիւն ունեցող

շարագրութիւններից։ Բոկլը, օրինակի համար, նորան վախեցնում էր, և այդ ոչ միայն նորա համար, որ շատ ընդարձակ էր, ալլ և նորա համար, որ նորա գը- րուածքը հակումն ունէր փելիսոփալական շարագրու- թիւնների գեր խաղալու, իսկ նա, ինչպէս ինքն ասում է, խոլո էր տալիս փելիսոփալութիւնից ինչպէս Պուշ- կինը՝ սեմինարիստներից։ Բոլոր փելիսոփաները, նորա կարծիքով, իւրեանց ամբիոնների բարձրութիւնից տե- սութեան վերայ առաջարկելով, մինչև ցայսօր զեռ միամտաբար կարծում են, թէ մարդուս կեանքը բաղկա- ցած է մի որ և է նախագծեալ, կամ նախասահմանեալ տեսութիւնից։ Մարդուս ընութիւնը, կարծես, մի հան- քալին բան է, որ գոյացած կամ կազմակերպուած լի- նի արտաքին Փիզիքական գանազան անփոփոխ օրէնք- ների հիման վերայ Հասել է ժամանակը, մարդկու- թիւնը պէտք է ժողոնէ տեսսականը, փելիսոփայականը, պէտք է ձեռք քաշէ ընագանցութիւնից-մետաֆիզի- կուից և դառնայ իրականութեան, զուտ ընագիտու- թեան։ Նա շատ է տանջուել զանազան իդէալական սիստեմների լետևից ընկնելուց։ Այդ սիստեմներից մի քանիսի վերայ նա ալժմ արդէն ծիծաղում է, մի քա- նիսին էլ գեռ հաւատ է ընծալում, թէև դոքա էլ իսկապէս առաջինների փոփոխուած ձևերն ու տեսսկ- ներն են։ Ժամանակ է իրական գիտութիւնների միջո- ցով մարդկութեան աչքերի կապը քակելու, կապը, որ տակաւին ամուր է. պէտք է գորայ վերայ քրտինք թա- փել և ոչ թէ փելիսոփալութեան լետևից ընկնել։ Նա խնդրում էր, որ իրան ուղարկեն մի կարգին շերամա- պահութեան ձեռնարկ, խնդրում է տարրաբաշխութեան վերաբերեալ գրքեր և անհամբեր սպասում էր Նվաճու- վի տեխնիքական քիմիայի երկրորդ հատորի գուրս գա- լուն, որին նա բաժանորդ էր գրուել։ Բայց որովհետեւ նորա բարեկամներն՝ այդ ժամանակներն այդ տեսակ ընտեր գրքերի շատ սակաւ լինելու և եղածների էլ գժուարութեամբ ձեռք ընկնելու պատճառվ, չէին կա- րողանում կամ, լաւ է ասել, սակաւ մասով էին միայն կարողանում ընակութիւն տալ նորա հարցասիրութեան, այդ պատճառով էլ նա ստիպուած էր շատանալ վելո-.

յիշեալ, կամ նոցա նման գրքերով։ Թէև, նորա ասելով,  
այդ գըքերը նորան շատ բան չէին տալիս, այնուամե-  
նալիւ նա, ինչպէս ասացինք, նոցա կարզում ու ու-  
սումնասիրում էր վերլուծական և քննադատական տե-  
սակէտից, որովհետև նա կործում էր, թէ գիտութեան  
մէջ ոչ մի բան չպէտք է արհամարհել, նամանաւանդ  
որ ուրիշ պարապմունք էլ չունէր։ Նոյն իսկ Բոկլը,  
յատկապէս նորա Անգլիոյ պատմութիւնը, նա սրտապլն-  
դած կարգում, օւսումնասիրում էր և նիւժ էր քաղում  
նորանից իւր ապագայում գրելիք մի գրուածքի համար։  
Բոկլը, ինչպէս յատնի է, եւրոպական քաղաքակրթու-  
թիւնը մեծ մասով արդիւնք է համարում բողոքակա-  
նութեան կամ պուրիտանիզմի, ինչպէս որ ուրիշներն  
էլ նորան արգասիք են համարում կաթոլիկութեան։ Նալ-  
քանդեանցն այդ տեսութեան վերայ բոլորովին այլ տե-  
սակէտից էր նալում։ Նա միանդամայն հակառակ էր և  
Բոկլին և բոլոր միւս փիլիսոփաներին, որոնք ընդհան-  
րապէս քաղաքակրթութիւնը կրօնքի հետևանք ու ար-  
դիւնքն էին համարում։ Նա, լողհակառակը, կարծում  
էր, որ կրօնքի մէջ առաջ եկած վերածնութիւնն ու  
յեղափոխութիւնն են քաղաքակրթութեան հետևանքը  
և ոչ թէ երկրորդն առաջնի Եթէ, նորա ասելով, քա-  
ղաքակրթութիւնը կրօնքի հետևանքը լինէր, Բուդայա-  
կանութեան և Բրահմինականութեան դարաւոր իշխա-  
նութիւնն ընդունող ծալրագոյն արևելքի ազգերը պէտք  
է որ կանցնած լինէին քաղաքակրթութեան և լուսո-  
ւորութեան ամենաբարձր աստիճանի վերայ բայց այդ  
այդպէս չէ։ Ինչ ասել կուզի, որ կրօնքը մեծ ազգե-  
ցութիւն ունի ամբոխի քաղաքակրթութեան վերայ,  
բայց հանգուցեալը դորա մասին չէր խօսում, այլ այն  
արմատական զարկի, ստիմուլի, դիաստագի կամ լծակի  
մասին, որ առաջինն է ոյժ մատակարարում ամբողջ մե-  
քանիզմին, կտղմուածքին։

Ո՞ր լմբոստ Սակսը, Բրիտը, Նորմանը կհամար-  
ձակուէր միջին դարերում գէմ կենալ պապերի տեղա-  
կալութեան և անմեղանչականութեան, այն ինչ նոքա  
այդ արին նոր դարերի սկզբին, որովհետև նոքա այդ  
ժամանակներն արդէն այնքան զարգացել ու լուսաւո-

քուել էին, որ ակներև տեսնում էին պապերի չափա-  
դանց մեծ ու անիրաւացի ձգտումները:

Մակոլէյն իւր անվերջ հումորով մեծ բաւականու-  
թիւն էր տալիս նալբանդեանցին, Գերվինուսն իւր  
լրջութեամբ շարժում էր նորա հետաքրքրութիւնը. մի  
ճիւղ կար միայն, որ նորան այնքան զզուեցնում էր,  
որ նա մինչև իսկ սրտապնդածն էլ չէր կարողանում  
մարսել, — ալդ հնագիտութիւնն էր և դորան վերաբե-  
րեալ գրքերը: Նալբանդեանցը դրական ուղղութեան  
տէր մարդ էր. նա իւր բոլոր ճիւղը թափում էր ուսում-  
նասիրելու միայն այն, ինչ որ յայտնի է: Բնական է,  
ուրեմն, որ նա չպէտք է համակրէը Վինկելնիւներին,  
Բէօկերին և միւս հնագէտներին, որոնք գտնելով մի  
որ և է անդրապատմական իր, աշխատում են ամեն տե-  
սակ վերականգնել վաղուց անցած գնացած իրականու-  
թեան պատկերը: Պատահում է, որ դռքա գտնելով Պոմ-  
պէլ և Հերկուլանում քաղաքների աւերակներից մի  
ժանդստած մկրատ, դորա վերայ գանազան հետազօ-  
տութիւններ են կատարում, աշխատելով վերականգնել  
լիակատար կերպով և այն տիկնոջ ամբողջ արդ ու զար-  
դը, որ գործ է ածել ալդ մկրատը: Ալաւ հնագէտը,  
ասում է նա հեգնելով, դորանով էլ չի շատանում, նա  
աշխատում է մինչև իսկ որոշել և ալդ տիկնոջ մազերի  
գոյնը և թէ արդեօք նա թխագէմք է եղել, թէ շէկա:

Շատ հետաքրքրական է հանգուցեալի կարծիքը  
Ֆոշէի գրքի մասին: Ֆրանսիացի Ֆաշէի գիրքը — «Օքեր-  
քի Ահրուն» գրուած էր 40 թուին, բայց թարգմանուած  
էր ուսուերէն շուտ տարի յետոյ: Եւ զարմանալին այն էր,  
որ թարգմանիչը ոչ մի ծանօթութիւն չէր դրել, որ  
ընթերցողը հսկանար թէ հեղինակի առաջ բերած տե-  
ղեկութիւնները վերաբերում են 40 թուականի Անգլիա-  
յին և ոչ թէ 60 թուականի: Ալդ հանգամանքը շատ  
զարացնում էր նորան, ինչպէս որ նորան զարացնում  
էր և Բոկլի թարգմանիչ Բեստիւժե — Ռիւմինի վար-  
մունքը, որ իւր ծանօթութիւնների մէջ առաջ բերած  
Ներողոտի և միւս լոյն հեղինակների գրուածների հա-  
տուածները չէր թարգմանել: Նալբանդեանցը Անգլո-  
ման չէր, բայց սիրող ու պաշտող էր ճշմարտութեան.

նա անիրաւացի էր համարում թարգմանչի վարժունքը, որովհետև նա դուրանով գիտակցաբար կամեցել էր անցեալը ներկալալի տեղ ներկալացնել միամիտ ընթերցող ներին:

Նա ինքը շատ լաւ էր ճանաչում իւր ժամանակուայ Անգլիան և անգլիացիներին և պարզ կերպով տեսնում էր, որ 20 տարուալ մէջ այնքան փոփօխութիւն էր առաջ եկել այնտեղ, որ գրքի մէջ լիշուածները գըլխովին չէին համապատասխանում 60 թուականների. Անգլիային: Սակայն Նալբանդեանցը համաձայն չէր նոյն իսկ ֆոշէի ներածութեան մէջ արտայալտուած էական կէտերի հետ էլ ֆոշէի առաջ բերած փաստերն Անգլիացոց բնաւորութեան և տէրութեան կազմակերպութեան մասին, նորա կարծիքով, բոլորովին ճիշտ էին. նոքա և՝ հպարտ են, և' եսական, ինքնուրոյնութիւն սիրող ու ուրիշներին նմանելուց խուսափող, բայց ճիշտ չէին նորա եղբակացութիւնները: Նա ամեն բանի մէջ տեսնում է րուտինս և տարօրինակ է համարում Տորիների և Վիգերի, ալսինքն արմատականների և յառաջադիմականների միաժամանակ գոյաւթիւնը: Նա՝ անգլիական կառավարութեան ձեւն իւր ծագած կամ կազմակերպուած օրից քարացած—կանգնած է համարում մի և նոյն կէտի վերալ, այն ինչ քաղաքական փիլիսոփայութիւնը մեծ յառաջադիմութիւն է արել: Նալբանդեանը ֆոշէի արդ եղբակացութիւնները սխալ էր համարում, համեմատելով Անգլիան ցամաքի տէրութիւնների հետ: Եւրոպայի կոնֆինենտի վերալ, ինչպէս յալտնի է, միջին դարերում յառաջ էին եկել Հռոմի աւերակների վերալ մի շարք նոր տէրութիւններ սահմանադրական կառավարութեան ձեռվ. որոնք և ունէին շատ թէ քիչ ընդարձակ ծաւալով ռազատութեան քարտիա: Բայց ինչ եղան նոքա, կարողացան պահպանել իւրեանց արդ սահմանադրութիւնը: Բաւարիան, օրինակի համար, մի այնպիսի ստհմանադրութիւն ունէր, որ ազատ կարող էր մըցել Անգլիալի հետ. ինչ արեց, պահպանեց նա արդ սահմանադրութիւնը: Ֆոշէն, գուցէ, մատնացոյց անէր Վերսալի վերալ, որ Լիւդովիկոս XIV ժամանակ գոհացնում էր ոչ միայն ֆրանսիացոց, այլ

և օրինակ էր հանդիսանում Եւրոպալի և միւս տէրութիւնների համար: Բայց Բնչ էր Լիւդովիկոսի Ֆրանսիան, եթէ ոչ ինքնիշխան, միապետական տէրութիւն սահմանադրականի ստուերով միայն: Կարելի է ասեն, թէ Անգլիան ցամաքից բաժանուած լինելով, չը ենթարկուել այն վտանգին, որ ոչնչացրել է Եւրոպալի ցամաքի վերալ գտնուած տէրութիւնների սահմանադրութիւնն էլ Կարոլոս Ա. ժամանակ պակաս վտանգի չի ենթարկուել, այն ինչ նա ամուր բռնել, պահել է նորան և հասցրել մինչև մեր օրերը:

Նալբանդեանցը չէր արդարացնում Կրօնվիլին, որովհետեւ, նախ՝ ամեն մի բռնի միջոց հակառակ էր նորա համոզմունքին, երկրորդ նա զգուելով երես էր դարձնում ամեն մի քաղաքական վերհատական գործողութիւնից, բայց նոյն ժամանակ նա չէր էլ ուզում արդարացնել Կարոլոսին, որ այնպէս անմտօրէն դաւաճանեց Անգլիային:

Փրանսիացիք հըճուանքով են խօսում իւրեանց յեղափոխութեան մասին, բայց նոքա իրանց տշխատանք չեն տալիս մի րոպէ մտածելու, որ եթէ Անգլիան պահած չլինէր իւր սառած-քարացած կարգերը և այդպիսով օրինակ եղած չլինէր Լամանշի միւս ափին գտնուած երկրի համար, գուցէ և մենք ալժմ չկարդալինք Փրանսիական պատմութեան մէջ այն արեան դրամալի էջը, որ կոչւամ է «եղափոխութիւն»: Խոշէի ասածը՝ թէ ընդհանուր սկզբունքը, որ հարկաւոր է ամեն մի հասարակութեան կամ տէրութեան կազմակերպութեան համար, արգելք չի լինում ոչ մի սահմանադրութեան՝ կրել իւր վերալ տեղական աւանդութիւնների, վարք ու բարքի և մինչև իսկ երկրի կլիմայի ազդեցութիւնը և գրաշմը, բոլորովին լարմարւում է Անգլիալի կառավարութեան ձեի կազմակերպութեան: Ընդհանուր սկզբունքն ալդտեղ սահմանադրութիւնն է ամենաընդարձակ ծաւալով, իսկ այդ սահմանադրութեան առանձնայատկութիւնները, որոնց մէջ և Վեդերի ու Տորիների միաժամանակ գոլութիւնը, անգլիացոց վարքի ու բարքի, աւանդութիւնների և երկրի կլիմայի արդիւնքն են: Եւ ինչ զար-

մանալի բան է, որ քաղաքական փիլիսոփայութեան օրէցօր զարգացումը պիտի ազգեցութիւն ունենար Անդլիալի վերալ, որ իւր կազմակերպութեան օրից պահել է, թէև, ինչպէս նոշէն ասում է, «քարացած» դրութեան մէջ, իւր սահմանադրութիւնը, իսկ կոնտինենտի տէրութիւնները նոյն քաղաքական փիլիսոփայութեան զարգացած օրերում նոր միալն պիտի ձեռք բերէին իսկզբանէ անտի ունեցած, բայց յետով կորցրած իւրեանց ազատութեան քարտիաները։

Հետաքրքրական է նալբանդեանցի կարծիքը և Հանրադիտական բառարանի մասին, որից մի երկու հատորիկ Անսնիան ուղարկել էր նորան՝ աչքի անցկացնելու, նամանաւանդ որ նորա մէջ պատահում էին տեղտեղ յօդուածներ և Հայոց մասին, գրուած Քերովը Պատկանեանցի ձեռքով։ Նալբանդեանցը չէր հաւանում այդ բառարանին, նա նորան միջակութիւնից էլ ստոր մի բան էր համարում։ Նա նկատե, ով, որ բառարանի հեղինակները յաճախ ընթերցողներին ուղարկում են Ատառի յաւելուածին և միևս տառերին, որոնց գեռ չէին հասել ոչ ինքեանք հեղինակները և ոչ գրաշարները, հեգնելով նմտնեցնում էր նորան Դօնքիշոտին, որ, ինչպէս յայտնի է, Սանխոյի հետ արած իւր երկրորդ ճանապարհորդութեան ժամանակ ամեն մի պատահած մարդու ուղարկում էր Տօբօզ իւր Դուլցինէէլի մօտ։ «Ի՞այց եթէ ալդ բառերին պատահելը պէտք է նմանի Սանխոյի Դուլցինէէլի հետ պատահելուն Տօբօզոյում, ասում էր նա, կարելի է առաջուց շնորհաւորել իսմբագրութիւնն ապագալ Ըօր դե բատօւ-ով, որով հիւրասիրում էր Դօնքիշոտը հաւատարիմ Սանխոյին յանուն ազատութեան Դուլցինէէլի կախարդութիւնից։ Նա բառարանի հեղինակներին անուանում էր «գրական արհեստաւորներ» և նոցա խմբագրած բառարանն արժանի էր համարում այն սառն ընդունելութեան, որ անում էր նորան ընթերցող հասարակութիւնը։ Նա անցած էր համարում այն ժամանակները, երբ կարելի էր խաբել ու մոլորեցնել միամիտ ընթերցողներին, ինչպէս օրինակի համար, անում էին այդ բառարանի հեղինակները, որոնց թւում և Պատկանեանցը, որի Հայոց պատ-

մութիւնից գրած յօդուածներին նա անպատճառ կպատասխանէր և ալդ առթիւ սաստիկ կհարուածէր նորան, եթէ միայն ազատ լինէր<sup>14)</sup>:

Հանրագիտակ բառարանի նալբանդեանցին ուղարկած հատորների մէջ առանձնապէս նորա ուշադրութիւնը գրաւում են երկու յօդուած, գրուած «Նրէաներ» և «Եւրոպա» բառերի մասին: Նա, թէև ալդ յօդուածներում Դօնքիշոտն անդադար ուղարկում էր նորան «Ծօրօլօ», համբերութիւն է ունենում կարդալու նոցաւ և իւր նկատողութիւններն անելու:

Դիտնականներից մէկը, կարծեօք Գրանովսկին, նորա ասելով, մի շատ յաջող նմանութիւն է արել Հընդկաստանի մասին: Նա Հնդկաստանն Եւրոպայի վերաբերմամբ համեմատել է մի ծննդականի հետ, որ աշխարհ բերելով մի զաւակ, ինքը մեռել է: Ալդ նմանութիւնը նա յարմարեցնում էր և Հրէաներին, որոնց արդէն կատարած էր համարում իւրեանց գերը պատմութեան մէջ: Հրէից ազգը, որ այնքան կարճատե պատմական կեանք է ունեցել, որ մինչև իսկ պատմական

<sup>14)</sup> Մենք ճիշտ չգիտենք, թէ ալստեղ որ հանրագիտական բառարանի մասին է խօսում նալբանդեանցը. 1863 թուին գուրս են եկել երկու Հանրագիտակ՝ «Էնցիկլոպեդիակ» և առաջնային աշխարհագիտակ՝ «Աշխարհագիտակ» առաջին համարում 1861 թուին առաջ Ա. Արաւելսկու, յետոյ Պ. Լ. Լաւրովի խմբագրութեամբ և չվերջացած դադարել է 1863 թուին Ե տառի վերակ Հնդամենը հրատարակուել է հատոր, որից առաջին հինգ հատորը պարունակե, է իւր մէջ միայն Ա տառը, այն էլ ոչ ամբողջովին, իսկ վերջին վեցերորդ հատորը—միայն Ե տառը. Երկրորդը սկսուել է հրատարակուել 1863 թուին Ֆ. Տոլի խմբագրութեամբ և վերջացել է 1866 թուին, կազմելով 12 տետրակ, ամփոփուած 3 հատորի մէջ:

Մենք կարծում ենք, որ երկու հանրագիտակից հանգուցեալի ձեռքին պէտք է եղած լինի առաջնի վեցերորդ հատորը Ե տառի վերակ, որովհետեւ նա խօսում է Եվրոպա և Եվրոպաների մասին և այն իւր 1863 թուի վետրուարի 18-ի նամակի մէջ: Տոլի բառարանից նա չէր կարող օգտուել, որովհետեւ նա սկսուած լինելով 1863 թուին, հազիւ թէ վետրուարին կարողացած լինէր իւր Ե տառի տետրակը հրատարակել:

ազգ էլ չի կարող կոչուել, իւր միջից արտադրել է մի քանի անձնաւորութիւններ, կամ անհատներ, որոնք իւրեանց խաղացած պատմական գերով շատ աւելի բարձր են եղել հին աշխարհի բոլոր պատմական անձերից։ Սկսած Փարաւոնների ժամանակներից մինչեւ մեր օրերն երևան են եկել այդ մեծ մարդիկը Հրէաների մէջ և գործել են թէ իւրեանց սեպհական հողի վերալ և թէ օտարների։ իսկ մէկը նոցանից, որ դասուել է աւազակների շարքը, մինչև իսկ քանդել է հին աշխարհը և գոռոզ կալսրին իջեցնելով իւր կալսերական աժոռի բարձրութիւնից, բերել, հասցըել է Գողգոթայի ստորոտը փրկութիւն որոնելու։ Գողգոթայի, որի վերալ նորա իշխաններից մէկը խաչ էր հանել նորան։ Թող նորա տուաջ գլուխ խոնարհեցնեն բոլոր օրէնսդիրները, քաղաքագէտները և հրապարակախօսները։ Բայց հէնց գորանով էլ սահմանափակուել է Հրէաների խաղացած դերը համաշխարհական պատմութեան մէջ։ Ներկայումս դժուար թէ մէկը գտնուի, որ նոցա համար աւելի լաւ ապագայ կարողանալ գուշակել։

Ով որ ուսումնասիրել է Աստուածաշունչը, հասկացած կլինի, որ Հրէաներն ուրիշ վիճակ էլ չէին կարող ունենալ, քան թէ որ ունին այժմ։ արդէն շատ երկար է աւել նոցա ստրկութիւնը և նոքա ալդ բոլոր ժամանակամիջոցում երբէք մի կենդանի ամբողջ օրգանիզմի նշան չեն ցոլց տուել։ Երկարատև ստրկութիւնը, որի մէջ ապրել է ալդ ժողովուրդը, և միստիքական դաստիարակութիւնը, որ ժառանգաբար որդէց որդի ստացել է Հրէաների մատաղ սերունդը, պատճառ են եղել նորա բարոլապէս ընկնելուն։ Սակայն ալդ բանում, տոանց քննելու բոլոր ալն ստիմուլները, որոնք ֆիզիօլոգիքաբար հասցըել են Հրէաներին ալդ դրութեան, անարդարացել կլինի մեղադրել նոցա։ Թողնելով մի կողմ նոցա կրած հալածանքները հեթանոսութեան ժամանակները, ահա հէնց 2000 տարի է, որ քրիստոնեաներն՝ էլ տանշանք չի մնացել, որ չտան նոցա։ Եւ որ գլխաւորն է, ալն բոլոր պակասութիւններն ու արատներն, որոնց համար մեղադրւում են նոքա, պատճառ-

տել են նոցտ այն հայրերը, որոնց որդիքն ալժմ հալածում են նոցա: Հրէաները, որոնց զարգացման ընդհանուր մակերևոյթը շատ էլ բարձր չէ, արժանի են կարեկութեան. նոքա ունին և լաւ կողմեր, որ նոցա կուրացած հակառակորդները չեն ուզում տեսնել: Հրէաները և քրիստոնեաներն իւրեանց ներկալումս միմեանց հետ ունեցած յարաբերութեամբ փոխադարձաբար կեղծ դրութեան մէջ են, և քանի որ այդ կեղծ դրութիւնը շարունակուի, նոցա վիճակն էլ չի բարւոքուիլ, թէև շատ նշանաւոր ու ազդեցիկ մարդիկ ժամանամ են այդ մասին և աշխատում են այդ ուղղութեամբ: Ժամանակ է, որ քրիստոնեաները հրէաների վերաբերութեամբ էլ լիշեն իւրեանց մեծ Վարդապետի քարոզութիւնը, որ վերաբերում է վշտացեալների, թշուառների, ծանրաբեռնուածների «լանկուցանելուն»:

«Եւրոպա» յօդուածում Հանրագիտակի հեղինակները նալբանդեանցի կարծիքով, աշխատել են հայերի թիւը քչացնել, 200 հազարի հասցնել, որ կարողանան նոցա գնչումներից յետոյ, կամ նոցա շարքին դասել, այն ինչ հաւասարի կերպով յալտնի է, որ Եւրոպայում ապրում է 800 հազ.սր հար: Միայն Եւրոպական - Տաճկաստանում սկսած Իզմալիլից՝ Տուլչի, Սիլիստրիա, Վարնա, Սոֆիա, Ադրիանոպոլիս և Կոստանդնուպոլիսի եւրոպական մասը՝ Բերեկ, Օրթաքէօլ, Բերա, Ղալաթիա, Խասքէզլ, Խիուրու, Պալատ և բուն Կոստանդնուպոլիս՝ Սամաթիա, Ետիկուլէ և Ա.յ.Մտեֆանօ ամենանոր և հաւասարի տեղեկութիւնների հիման վերայ տպրում են 450,000 հար: Բացի սորանից, Ուլախաց երկրում և Մոլդովիայում ապրում է 30 հազար, Աւստրիայում — 18 հազար, Ռուսաստանի նախարարութիւնում և Հայաստանի և Բեսարապիայ թեմութ — 36 հազար, չհաշուելով դեռ կաթոլիկ Հայերին, որոնք ապրում են Գալիցիայում, Տրանսիլվանիայում, Ղրիմում, Լեհաստանում և Եւրոպական Տաճկաստանի զանազան կողմերում: Առհասարակ հայերի թուի խնդիրը միշտ մի տեսակ տարօրինակ ճակատագրական վիճակի է եղել ենթարկուած: Շատերը շատ բան են գրել այդ մասին, շատերն են իրանց խելքին զօր տուել, մինչև իսկ պատահել են և այնպիսիները, որոնք ուղղակի անհիմն

թուեր են մոգանել, բայց խնդիրը մնացել է միշտ անորոշ գրութեան մէջ։ Եւ ուրիշ պէս լինել էլ չէր կտրող, քանի որ այդ մասին գրողներից և ոչ մէկը համարեած չի ունեցել իւր ձեռքին հաւասարի պաշտօնական տեղեկութիւններ։ Այդ այդպէս լինելուց լետոյ, բնական է, որ ոչ մի առողջամիտ մտածող, ոչ մի բարեխիղն հետազօտող չի վստահանալ իւր դատողութիւնները Հայոց թուի մասին հիմնել արդէն գոյութիւն ունեցող թուերի վերայ, որոնք աւելի արժանի են լուացքաջրի փոսը թափուելու, քան թէ տեղ բռնելու մի որևէ գիտական լուրջ գրուածքում։

Ամենահաւանականն է կարծել, որ ներկայումս Հայերի թիւն ամբողջ աշխարհում լինի, 4,500,000-ից մինչև 5,500,000։ Այս թուերի վերայ են գոնէ մատնացոյց անում մինչև այսօր գոյութիւն ունեցող ամենաստոյգ տեղեկութիւնները։ Տաճկահայոց ազգալին ընդհանուր ժողովը Կոստանդնուպօլակում լաւ հասկանալով Հայոց թուի ճիշա վիճակագրութիւնը կազմելու անհրաժեշտութիւնը և կարևորութիւնը, արդէն իսկ վճռել էր ձեռնարկել այդ գործին, բայց դժբաղդաբար պատահած խռովութիւնների պատճառով ստիպուած եղաւ ի թիւս ուրիշ շատ կարևոր խնդիրների լետաձգել և այդ խնդիրը, մինչև որ հաստատուի «Ազգային Սահմանադրութիւնը»։

Հետաքրքրական է Նալբանդեանցի կարծիքը և Հայաստանում գործող միսիօնարների մասին ընդհանրապէս և Ամերիկայի միսիօնարների մասին մասնաւորապէս։ Պաստոր Բարտողն այդ ժամանակները հայ բողոքականների մասին Տաճկահայաստանում մի տեսութիւն էր գրել։ Նալբանդեանցը թէև չէր կարդացել նորա գրուածքը, բայց կարճ ում էր, որ այդ անպատճառ պէտք է մի գրուատիք լինէր ուղղած իւր արկածախնդիր կրօնակիցների հասցէին։

Բողոքական միսիօնարները, նորա կարծիքով, նոյնքան կեղծ, սուտակասպաս և խաբեքայ են, որքան և ճիզուիթները, և նոցա գրուածներին, ասածներին ու արածներին էլ ալնքան հաւատք պէտք է ընծալել, որ-

քան ճիզուիթներին, երբ նոքա պատմում են և գրում ժամանակակից դարերի պատմութիւնը. կամ երբ նոքա գործում են աշխարհիս խուլ անկիւններում: Զպէտք է հաւատք ընծայել մինչև իսկ և ամբողջ Միսսիալին, որ գործում է այն սկզբունքի հիման վերայ, որով գործում էր լարգելի Թրանսուա Քսավիէն Հնդկաստանում, Զապօնում և որով գործում էին ճիզուիթները Զինաստանի մայրաքաղաքում: Այլ բան է սկզբունքը, այլ բան նորա գործադրութիւնը կեանքում: Քսավիէն հաւատարիմ էր սկզբունքին, իսկ նորա լաջորդները դաւաճանեցին նորան:

Նա առաջարկում էր կարդալ Ամերիկայի «Newjork Herald» ամսագիրը, որի մէջ ջարդ ու փշուր էին արել ալդ սուտ առաքեալներին. առաջարկում էր կարդալ և «Times» լրագրի 1861—62 թուի համարները, որոնց մէջ բողոքներ էին տպուած ալդ գառնազգեստ գալլերի դէմ: Ամերիկայի միսիօնարները մեծ ոռնիկ էին ստանում և որպէս զի ցոյց տան, թէ ինքեանք մեծ գործեր են կատարում Տաճկաստանում, ուր ուղարկուած են նոքա մահմետականներին քրիստոնէութիւն քարոզելու համար, Հայերին մահմետական էին ներկայացնում իւրեանց միսսիայի տրիբունալի առաջ, իսկ նոցանից դարձուածների թիւը, որ շատ չնշին բան էր և այն էլ ձեռք էր բերուած փողով և դեսպանների նոցա ցոյց տուած խնամակալութեան շնորհիւ, աւելացնում, հազարների էին հասցնում: Ալդ հանգամանքը, ի հարկէ, երկար չէր կարող ծածուկ մնալ միսսիայից. զուտով ամեն բան յայտնուում է և երևան է գալիս նոցա անխիղճ խարէութիւնը: Դուամը, գլխաւոր միսիօնարը կանչւում է Ամերիկա. նա խիստ պատասխանատութեան և դատական քննութեան պիտի ենթարկուէր, եթէ միայն երկաթուղու գնացքներից մէկի ընդհարումը, նորա բաղդից, շուտով նորան առ նախահարս չտեղափոխէր: Ալդ միսիօնար շարլատաններից մէկին ինքը նալբանդեանցը տեսել էր իւր ճանապարհորդութեան ժամանակ նաև վերայ Պօլսի և Զմիւնալի մէջ: Նա, ալդ միսիօնարը ճանկել էր հէնց ալդտեղ նաև վերայ մի խեղճ հայ պատանի և օգտուելով նորա տգիտութիւնից

ակսել էր, դաւանափոխ անելու դիտաւորութեամբ, քարոզել նորան: Նալբանդեանցը նկատելով պատառու անպաշտպան դրութիւնը, վերալ էր հասել և այնպէս ձեռք առել ու նեղը ձգել արկածախնդիր մարդորսին, որ նաշտապել էր իւր օձիքը նորա ձեռքից ազատելու համար փախչել և մինչև ճանապարհորդութեան վերջը չէր համարձակուել նաւի ծակուուից գլուխ հանել, դուրս գալ:

Նալբանդեանցը միսիօնարների քարոզութեան մասնաւոր յաջողութիւնը Տաճկահայաստանում 40 թուականներին վերագրում էր այն անպաշտպան դրութեան, որի մէջ գանւում էին Հայերը Տաճկաստանում: Անդլիացիք և Քրոնսիացիք օգտուելով այդ հանգամանքից, իւրեանց պաշտպանութեան տակ էին առնում այն հայերին, որոնք հտմածայնում էին դաւանափոխ լինել: Այդ գէպքում դաւանափոխութիւնը հայերի կողմից հասաւատ համոզմունքի խնդիր չէր, այլ նեղութիւնից ու հալածանքից պաշտպանութիւն գտնելու մի միջոց, իսկ Ֆրանսիայի և Անգլիայի վարմունքը մի քաղաքականութիւն էր, որով նոքա իւրեանց ազգեցութիւնը զօրացնում էին Օսմանեան կայսերութեան սահմաններում: Տաճկաստանն էլ այդ քաղաքականութեան նրբութիւնը չէր հասկանում: Քսանական թուականների հայ կաթոլիկների յայտնի հալածանքներից լետոյ, «գեղձախտիքի թիշկ» Լուի-Փիլիպը հաւատացրել էր Սուլթանին, թէ դաւանափոխութիւնը Հայերի մէջ հալածել պէտք չէ, այլ, ընդհակառակը, պէտք է խրախուսել, որովհետեւ թիւրքերի տիրապետութեան վնասակար են միայն ադգային եկեղեցուն պատկանող Հայերը և ոչ դաւանափոխները, որքան որ դաւանափոխութիւնն աճի և ընդարձակ ծաւալ ստանալ նոցա մէջ, այնքան էլ այդ հանգամանքն օգտաւէտ կլինի Օսմանեան կայսերութեան, որովհետեւ զորանով Հայերի ոյժը կջլատուի և նոքա կթուանան: Սուլթանն ընդունել էր այդ խրատը, բայց կարդացել էր միայն նորա մի երեսը, իսկ միւսը, թէ գորանով միայն կտարածուի, կզօրանալ եւրոպական տէրութիւնների ազգեցութիւնն իւր կայսերութեան մէջ, որ յայտնի բան է, աւելի վտանգաւոր էր նորա համար,

ալդ նա իւր սովորական անհեռատեսութեամբ ի նկատի չէր առել:

Գլուխ է.

Մեծ մխիթարանք էր Նալբանդեանցի համար նորա կեանքի ալդ ժամանակուայ պայմաններում և գրական պարապմունքը: Բանտումն է նա թարգմանել, ինչպէս լալտնի է, Ղազար Փարպեցու թուղթը, այնտեղ է գրել նա Պուշեանցի «Սօս և Վարդիթերի» քննութիւնը, այնտեղ է հաւաքել և կազմել «Նիւթեր Փիզիկա-ֆիլոսոփիական-պատմական-աշխարհագրական» ներածութեան համար Բոկլի հետեւողութեամբ, այնտեղ է կատարել իւր «Համեմատութիւնը Ղալոց Աստուածաշնչի թարգմանութեան լունտական և եփրայական բնագրերի հետ<sup>15)</sup>: Բայց ամենամեծ աշխատանքը և իւր ժամանակի տմենամեծ մասը նա նուիրել է Ղալոց աշխարհաբառ լեզուի քերականութիւնը կազմելու գործին, որից

<sup>15)</sup> Նալբանդեանցը շատ էր հետաքրքրում Ղալոց Աստուածաշնչի թարգմանութեան իննդրով, ուստի և ամեն մի տեղեկութիւն կամ ծանօթութիւն, որ երեսում էր ընթացիկ գրականութեան մէջ Աստուածաշնչի մասին ընդհանրապէս, նա աշխատում էր գտնել ու կարդալ, Եղած աեղեկութիւնները հատ ու կտոր էին, «Ծոնքիշոտն էլ չէր գոհացնում նորան, Նորան ալդ ժամանակներն ասել էին, թէ նախկին նախարար Ա. Ս. Նորովը Սիհնալում գտել է Աստուածաշնչի լունտական ամենահին ձեռագիրը, բայց չէին կարողացել ասել, թէ նա որ դարին է պատկանում, Նա իննդրել էր իւր բարեկամներից որ նոքա, եթէ ամսագրերում ալդ մասին մի բան տպուած գտնեն, իսկորին իրան ողարկեն, իսկ եթէ ոչ՝ հարցնեն իւր բարեկամ գիտնական Ֆիտկովիչից հաւանական էր, որ նա իմանար, Եթէ վերոլիշեալ ձեռագիրը Քրիստոսից մի քանի դար առաջ գրուած լինէր, նա մի կատարեալ գառնձ կլինէր եփրական Նալբանդեան բնագիրը և Օրեղենի Կ դարում հաւաքած լունական թարգմանութիւնը վերստուգելու համար, Ակդ վերջինը—լունական թարգմանութիւնը, ինչպէս լալտնի է, համարում է «Յօթանասնից-ը», որի վերափից և արած է Ղալոց Աստուածաշնչի թարգմանութիւնը Ծ դարում: Հասմն արդեօք Նալբանդեանցն իւր նպատակին,—մենք չդիտենք, որովհետև նորա «Աստուածաշնչի համամատութիւնը» դժբաղդաբար մեր ձեռքը չի հասել:

դժբաղբաբար միայն մի քանի հատուածներ են հասել  
մեր ձեռքը:

Նորա գլխում 63 թուին ծագել էր մի միտք —  
կազմել աշխարհաբառ լեզուի լիակատար, ընդարձակ քե-  
րականութիւնը, որի մասին նա առաջ էլ մտածել էր և  
որը գրելու համար նորան խնդրել ու առաջարկութիւն  
էին արել Տաճկահայերը նորա Պօլսում եղած մամանակ-  
բայց նա այն ժամանակները մասամբ միջոց չունենա-  
լով, մասամբ էլ այդ մի գժուար և իւր ուժերից վեր  
բան համարելով, չէր համարձակուել: Այժմ, երբ նա  
և շատ ազատ ժամանակ ունէր և լուրջ մտածելու լար-  
մարութիւն, վճռում է ձեռնարկել այն գործին և հե-  
տեղիետէ, կամաց կամաց գլուխ հանել: Ճիշդ է, նա այդ  
ժամանակն էլ այդ մի լանդուգն աշխատանք էր հա-  
մարում, բայց նա չէր էլ մտածում մի կատարեալ, վերջ-  
նական գործ արտադրել այդ ուղղութեամբ, այլ կար-  
ծում էր և կարեոր էր համարում ինքը սկիզբը գնել,  
որ հեշտութեամբ շարունակեն, զարգացնեն, լրացնեն  
և մշակեն միւսները: Նորա մտքով չէր էլ անց-  
նում, որ ինքը կարողանայ այդ հսկայական աշխա-  
տանքը բանտում վերջացնել, դորա համար պակա-  
սում էին նորան անհրաժեշտ պալմանները: Նա չունէր  
իւր ձեռքի տակ ոչ հարկաւոր գրքերն ու բառա-  
րաններն, ոչ հոգու անդորրութիւն և ոչ Հայոց  
կենդանի խօսք լսելու ու հայկական կեանքի ու ժողո-  
վըրդի հետ շփուելու լարմարութիւն, պալմաններ, ո-  
րոնք անշուշտ հարկաւոր էին մի այդպիսի մեծ և կա-  
րեոր գործ կատարելու համար: Նա պիտի սկսէր գրել  
մի քանի գրքեր՝ Սոս և Վարդիթերը, Աէրք Հայաստա-  
նի, Սայաթ-Նովա միայն ունենալով իւր ձեռքին և գըլ-  
խաւորապէս լիշողութեամբ ու 20 տարուայ գսրծնական  
գրական պարապմունքի պատրաստութեամբ և հասցնէր  
ալնտեղ, որտեղ լիշողութիւնն արդէն գտնարէր ծա-  
ռալել նորան և գործնական պատրաստութիւնը սպա-  
ռուէր:

Ալդտեղ, այդ կէտի վերայ նա պիտի խարիսխ ձը-  
գէր, կանդնէր և սպասէր, մինչև որ ինքն ազատուէր  
և ձեռք բերէր վերոլիշեալ բոլոր անհրաժեշտ սլայման-

ները։ Սակայն նորա վճիռը հաստատ ու անդարձ էր. նա ալսպէս, թէ այնպէս պիտի վերջացնէր նորան և ազատուելուց յետոյ էլ, մինչև որ գլուխ չհանէր, ու ընդ գրական աշխատանքի ձեռնարկելու չէր, բացի, ի հարկէ, այն դէպքերից, երբ ստիպուած լինէր պատասխանելու իւր դէմ եղած լարձակմունքներին։ Նա լաւ գիտէր, որ կեանքում ազատութեան մէջ էլ նա իւր ձեռնարկելիք գործի համար մեր գրականութեան մէջ շատ նիւթ չպէտք է կարողանար գտնել, բայց իւր բոլոր լուսը դնում էր այն բանակուի վերալ, որ կծագէր անշուշտ հայ գրագէտների մէջ իւր աշխատանքի առթիւ։ Նա այն ժամանակ թաղնելով մի կողմ իւր հացէին ուղղած բոլոր լիշոցները, հայՀոյանքները, լուռ ու մունջ կօգտուէր հակառակորդների լոդուածներում երեւան եկած ժողովրդական տարրերից, օրինակ բերուած լեզուի նմուշներից և իրան տրուած լաւ ու նըպատակալարմտր խրատներից ու դասերից։ Նա, ինչպէս ասացինք, լաւակնութիւն էլ չունէր կարծելու, թէ իւր կազմելիք քերականութիւնը պիտի կատարեալ լինի. ամեն գործի սկիզբն անկատար է լինում։ Նա կարծում էր, որ իւրը մի սկզբնական բան կլինի, մի ցանց, որի վերալ ուրիշներն արդէն կհիմնեն կատարեալը, մշակուածը, նա շատ օգտաւէտ էր համարում, որ մի ուրիշն էլ ձեռնարկէր նոյն գործին, ունենալով իւր ձեռքին նորանը և գործածելով նորան իւրի համար իբրև մի Փոն։

Քերականութիւնը պէտք է կոչուէր «Մեր լեզուի արմատական յեղափոխութեան մի փորձ» և պէտք է բաղկացած լինէր երեք մասից՝ ներածութիւնից, նոր լեզուի համեմատական քերականութիւնից և փորձնական քերականութիւնից։ Ամբողջ գործը պիտի կազմէր մի 30—35 ու 8 տպագրական թերթից բաղկացած ստուար հատոր և պարունակէր իւր մէջ այն բոլորը, ինչ որ միայն կարելի էր ասել այն ժամանակները նոր լեզուի կազմակերպութեան մասին։ Ներածութեան մէջ, որ մօտաւորապէս պիտի բռնէր 15 տպագրական թերթ, նա մտածում էր ամփոփել հին լեզուի անկման և նորի կազմակերպութեան ընթացքը, հաշտեցնել, ըստ կա-

բելոյն, նոր լեզուի երկու կարևորագոյն ճիւղերը, վերջնական և գրտկան կերպով հրաժարուել բոլոր այն ձեւերից, որ ներկայումս ժողովուրդը չի գործածում, և օտարազգի բառերից, եթէ միայն ժողովուրդը գործ է ածում նոցա անխափը, առանց կարիքի։ Համեմատական քերականութեան մէջ, որ պիտի բռնէր մօտաւորապէս 10—15 տպագրական թերթ, նա պէտք է ամփոփէր իւր արած համեմատութեան արդիւնքը, լալտնի հեմունքի վերայ, բոլոր իւրան լալտնի հալաբնակ տեղերի տեղական լատկութիւն ունեցող բարբառների։ Փորձնական քերականութեան մէջ, որ մօտաւորապէս 8—10 տպագրական թերթի ծաւալ պիտի ունենար, նա պէտք է ամփոփէր նոր լեզուի մաքուր, զուտ քերականական տարերքը, որպէս զի հնարաւոր լինի նորան տալ բոլոր հալաբնակ տեղերի ուսանող մանուկների ձեռքն իրեւ դասարանական ձեռնարկ։ Այդ մասի մէջ չպէտք է լինէին ոչ մի աւելորդ խօսք ու դատողութիւն, այլ միայն լեզուի ամենակարևոր օրէնքները։ Ենչո՞ւ և ինչո՞ւ համար՝ հարցմունքները և նոցա բացատրութիւններն ամենեւին տեղ չպէտք է ունենալին այդ մասի մէջ, որ նա մտածում էր բաժանել և առանձին տեսրակով էլ հրատարակել հեշտութեամբ գործածելու և տարածելու համար։ Նորա կարծիքով, մանուկը պէտք է, նախ, առանց քննադատելու, վերլուծելու, սպիորէ լեզուի գլխաւոր կանոնները, լետոյ արդէն, երբ նա մեծանալ, զարգանալ և իւր սեփական դատողութիւնն ու հալեացքն ունենալ, կարդայ և իւր հարցամիրութեան պատասխանները գտնէ քերականութեան անալիտիքական կամ վերլուծական մասի և ներածութեան մէջ։ Փորձնական քերականութիւնն որքան որ կարճ լինի, որքան որ քիչ խճճուած լինի, որքան գրական ու հաստատուն լինի, առանց վիլխոփալութեան, այնքան էլ նա դիւրամատելի կլինի մանուկներին, այնքան էլ հեշտ կուսումնափրուի։

Նալբանդեանցն աշխարհաբար լեզուի, չենք ասում ճիշդ, գոնէ, մօտաւոր քերականութիւն ունենալը Հայերի մտաւոր վերածնութեան գործի համար այդ ժամանակները մի շատ կարևոր և անհրաժեշտ պայման էր

Համարում. նորա կարծիքով, մինչև որ մեր նոր կամ քաղաքացիական լեզուի քերականութիւնը չի լինի բոլոր հայ ուսուցիչների և դպրոցականների ձեռքին, մինչև որ նա, իբրև լեզուի ուսուցման սովորական ձեռնարկ, մուտքի գործի հայ դպրոցները, ոչ մի գրական ձեռնարկութիւն մեր մէջ յաջողութիւն չի ունենալ: Գրողներ կային, ինքը նալբանդեանցն էլ գրութէր, և կարելի էր տոհասարակ զրել բաւականին հարթաշխարհաբառով, բայց այդ հարթ գրուածներն օտար էին մնում և օտար էլ պիտի մնալին ժողովրդին, որովհետև նոցա տարերքը չէին առնւում ժողովրդի բուն լեզուից, այլ հին լեզուի մեռած ու սառած աւերակներից, որոնց մէջ թէւ երեւնն պատահում էին բուն ժողովրդական ձեեր, ոճեր ու նախադասութիւններ, բայց նոքա կորչում, խեղդում էին սիստեմականութեան հեղեղի մէջ:

Իւր, նալբանդեանցի և նորա ջերմ համակրող ու գաղափարակից նալբանդի և դոցա համակրողների ու համախոհների ջանքով էր առաջին անգամ նոր լեզուն, իբրև հայ մտքի արտալայտութեան և փոխանակութեան գործիք, մուտք գործել Արևելահայոց գրականութեան մէջ, նոցա աշխատանքով էր 10 տարի առաջ հրատարակուել Ռուսահայոց առաջին աշխարհաբար գերքը, և այն օրից նալբանդեանցը չէր դադարել հրապարակով կոչումներ անելու, որ հայ գրագէտները ցոյց տան իւր սխալները մանրամասնութիւնների մէջ, ուղղեն նորա մոլորութիւնները, բայց նորա այդ ուղղութեամբ գործ գրած բոլոր ջանքին ու աշխատանքին պատասխանել էին հայհոլանքով, լիշտացներով և նոր լեզուն պախարակելով: Տասնամեալ փորձը, երկար գեղերումը հայաբնակ տեղերում և շփուելը հայ ժողովրդի հետ, վերջապէս, բերել, հասցրել էին նորան այն եղբակացութեան, որ այլ ևս այդ ճանապարհով չի կարելի գնալ, այլ ևս այդ ճանապարհով ընթանալը օխուլ, ապաբդիւն կլինի: Նա լանգել էր այն եղբակացութեան, որ պէտք է իսպառ մի կողմ թողնել հին լեզուն և աշխարհաբառը զարգացնել ինքնուրուն, մատակարարելով նորան նիւթ բուն ժողովրդի մշակած ձեերից, ոճերից

և դարձուածներից; Եւ նա հպարտութեամբ լիշում էր  
այն, որ նա ինքն էր հասկացել իւր սխալը, տռանց  
ուրիշի օգնութեան, և իւր համար պատիւ էր համա-  
րում՝ հրտպարակով մեղաղբել իրեն իւր տասնամեալ  
մոլորութիւնների համար և խոստովանել ճշմարտութիւնը:

Լեզուն, նորա ասելով, մի արուեստական իր չէ,  
մի մեռած, սառած բան չէ, որ կանգնած մնալ մի և  
նոյն կէտի վերալ. նա մի կենդանի կազմուածք է, որ  
ապրում, զարգանում, փոփոխուում է այն ժողովրդի հետ  
միասին, որի սեփականութիւնն է կազմում։ Մինչև այդ  
ժամանակները գրական աշխարհաբառով գրողները, ո-  
րոնց թւում և ինքը նալբանդեանցը, գիտակցաբար  
չէին վերաբերուում դէսի նոր լեզուի քերականութեան  
գլխաւոր տարերքը. նոքա գործ էին ածում բայերի եղա-  
նակներից ու ժամանակներից միայն նոցա, որոնք համապա-  
տասխանում էին հին լեզուի ժամանակներին ու եղանակնե-  
րին, և իսպառ չէին նկատում, որ մի քանի ժամանակի չգոր-  
ծածելուց, որսվհետև նոքա չկալին գրաբառի մէջ, վնաս-  
ուում էր նոր լեզուն. նոքա աշխարհաբառ ոճերից, ձևերից  
դարձուածներից գործ էին ածում միայն նոցա, որոնք իւ-  
րեանց կազմութեամբ նմանում էին դասականին, և ու-  
շադրութիւն չէին դարձնում, որ այդպիսով բազմաթիւ  
բուն ժողովրդի ինքնուրոյն մտաւոր աշխատանքով մշա-  
կուած դարձուածներ ու ձևեր գուրս էին մնում գոր-  
ծածութիւնից. նոքա իւրեանց չիմացած ձևերը պատ-  
րաստի փոխ էին առնում գրաբառից և չէին նշմարում,  
որ դրանով նոր գրական լեզուն զատում, հեռացնում  
էին ժողովրդից և մի տեսակ նոր գրաբառ դարձնում,  
կարծես թէ, ծթ դարի Հալը ձեռագիր տուած լինէր  
միշտ այնպէս մտածել, այնպէս արտայսլու իւր միտ-  
քը, ինչպէս 2 հազար տարի առաջ ապրող Հալը։

Լեզուն ապրում է ժողովրդի հետ միասին և բա-  
ւարարութիւն է տալիս այդ ժողովրդի ժամանակակից  
պահանջներին և մտածողութեան ձևին։ Հին Հալն ու-  
նէր իւր պահանջները և իւր մտածողութեան ձևը, և  
գրաբառ լեզուն նորա պահանջների և մտածողութեան  
արդիւնքն էր։ Նոր Հալն էլ բնական է, որ ունենայ  
իւր պահանջներն ու մտածողութեան ձևը և դրան

լարմար ու համաձայն լինի և նորա լեզուն։ Նոր Հայը թօնել է հին լեզուն, որովհետև նա նորան այլ ևս չի հասկացել, որովհետև գրաբառն այլ ևս չի համապատասխանել նոր մտածողութեան ու մտքի արտայալտութեան ձևին, որ բնականապէս տարբեր է, քան թէ ինքը Հին լեզուում, որինակի համար, կայ Գան ըմպելց ոճը, իսկ նոր լեզուում ծեծ չի խմտում, այլ ուտուում է։ Նալբանդեանցը թէս գնահատում էր հանգուցեալ Գէորգ Հախվերդեանի քանքարն ու ընդունակութիւնը նոր լեզուի ուսումնասիրութեան գործում, բայց նա համակարծիք չէր նորան։ Հախվերդեանն իւր Սալտմ-Նովայի յառաջաբանում, ինչպէս յայտնի է, առաջարկում էր ընդունել իբրև հիմք նոր գրական լեզուի Տարոնի բարբառը, որովհետև նա նորա մէջ աւելի պահպանուած էր գտնում հին ձևերը։ Նալբանդեանցը, ընդհակառակը, բոլորովին ուրիշ ճանապարհով էր գնում։ Նա կարծում էր, որ ամեն մի գաւառի լեզու արդիւնք է նոյն գաւառի ժողովրդի մըտածողութեան, ուստի և նա չի կարող ընդհանուր մըտածողութեան և մտքի արտայատութեան գործիք գառնալ ընդհանուրի համար։ Նոր գրական լեզուն, նորա կարծիքով, պիտի զարգանար ընդհանուր, բոլոր բարբառների նիւթերով և գլխաւորապէս ևս նոցա միայն բուն ժողովրդի մտքի մշակած ձևերով, որոնք պէտք է հետզհետէ գաղտագողի, մաքսանենգութեամբ ու զգուշութեամբ առնուեն, մտցնուեն, մածուցուեն և խառնուեն ընդհանուրի մէջ։ Հին ձևերը բոլորովին կարևոր չեն, որովհետև նոքա հին են, հասկանալի չեն ընդհանուրին, և հէնց ալդ պատճառով էլ Տարոնի բարբառն երբէք չի կարող ընդհանուրութեան, բոլորին հասկանալի լեզու դառնալ։

Հին ձևեր գտնելու համար ամենևին կարիք էլ չկայ դիմելու Տարոնի բարբառին, քանի որ աւելի հեշտ ու առատութեամբ կարելի է գտնել նոցա ամեն մի հայ գասական հեղինակի գրուածքում և հին լեզուի ամեն մի լիակատար բառարանում։ Լեզուի տեսակէտից առհասարակ գաւառները չպէտք է աշխատեն իշխելու մէկզմէկու վերալ և հրամալելու նոցա ալսպէս, կամ ալնպէս խօսելու։

Լեզուն մի վարդապետութիւն չէ. ամեն մի վարդապետութիւն կարելի է քարոզել և հետեւորդներ գըտնել. լեզուն օրէնք չէ. ամեն մի օրէնք կարելի է հրատարակել և հրամայել կատարել, և կկատարուի. լեզուն վերջապէս, մի տրակտատ չէ. ամեն մի տրակտատ կարելի է գրել. և կարդացողներ կգտնուեն: Հայաբնակ գաւառները, եթէ կամենում են, որ նոր լեզուն զարգանալ և մի բարոյական շաղկապ դասնալ բոլորի մէջ, պէտք է անշուշտ զոհ բերեն իւրեանց տեղական ինքնասիրութիւնն ընդհանուրի օդտին, այլապէս երբէք և ոչ մի արդիւնք չի լինի, բարբառների զանազան վերջաւորութիւնների և մասնիկների փոխադարձ ընդունելութիւնը և մերժումը միայն կարող է հասցնել մեզ մեր ցանկովի նպատակին:

Նալբանդեանցին նորա բարեկամներն առաջարկում էին իւր ձեռնարկսն աշխատանքի համար օգտուել ուսուաց դիւաններում պահուած հին հայ թղթերից ու լիշտակարաններից, բայց նա մերժում էր, որովհետեւ գիտէր, որ այդ դիւաններում կարող են պահպանուած լինել միայն Ալէքսէլ Միխայիլովիչի ժամանակներից. զանազան առեւտրական թղթեր, որոնք շատ շատ ծառալէին իբրև նմուշ Հին Զուղալի, Պարսից զանազան գաւառների և Հաշտարխանի հայոց լեզուին և պարզաբնէին անցեալ սերնդի առեւտրական գործունէութիւնը. Նալբանդեանցին հարկաւոր էր ոչ անցեալ, ալլ ներկայ սերունդը:

Եթէ ներկայ սերունդը չի մշակել իւր մտքի արտալայտութեան համար սեփական ձևեր, արդտեղ ոչ մի բան չի օգնիլ: Նա խնդրում էր, որ իրան տան նոր սերնդի մտքի աշխատանքով մշակուած ձևեր, առանց ուշադրութիւն դարձնելու նոցա շքեղութեան ու գեղեցկութեան վերալ, որովհետեւ լաւ էր հասկանում, որ այդտեղ, շքեղութեան, գեղեցկութեան կամ տգեղութեան խնդիր չկալ, ալլ միայն նպատակալարմարութեան և օգտաւէտութեան: «Մխալ ուղղութիւն է կարծել, ասում էր նա, թէ լեզուն, ինչպէս մի շողակն, կարող է պահուել արկում, և հէնց որ բանաս այդ արկզը, ամենքը վրալ կը թափուեն ու կյափշտակեն, ինչպէս որ յափշտակում են ամեն մի թանկագին իրաւ:

Նալբանդեանցը յաւակնութիւն չունէր կարծելու, թէ ինքն ալդ խնդրում անսխալական է. նա չէր էլ մտածում, թէ ինքն իւր ձեռնարկած գործն այնպէս կկոտարէ, որ կարելի կլինի ասեղ «*Satis est*, կամ «*Ceterum homos*»: Նա իրան շատ բաղդաւոր կհամարէր, եթէ միայն գտնէր խրախուսանք ոչ յօդուտ իւր անձի, այլ յօդուտ իւր ուղղութեան: Այն ժամանակուալ հանգամանքներում չէր էլ կարելի ձեռնարկած պատկերի բոլոր ֆիգուրները գեղեցիկ նկարել, այլ միայն ձգտել, որ պատկերի մէջ նոքա դրուած լինին իւրեանց տեղն իւրեանց բնական գերքով, որ իւր ոյժերից վեր չէր համարում կատարել հանգուցեալը: Նալբանդեանցը չէր հասկանում երբ նոր լեզուի հակառակորդները ճգնում էին ապացուց տալ, թէ գրաբառը գեղեցիկ է, լաւ է, իսկ աշխարհաբառը գուհիկ է ու տգեղ: Աբսոլիւտ կամ անպայման, ինչպէս յալտնի է, ոչինչ չկալ. ամեն բան աշխարհումս պայմանական է ու համեմատական, նալելով այն հալեցակէտին, որով մարդ կնայի գործի վերալ: Զիաւ մի ընդհանուր չափ, որով մարդս կարողանալ չափել և որոշակի ասել, թէ այս ինչ բանը լաւ է, այն ինչը վատ է ու տգեղ: Մեր ձեռքին եղած չափն ու հալեցակէտն էլ մի հաստատուն ու դրական չափ չէ, այլ շարժուն ու տատանուող, որովհետեւ նա կախեալ է լաւն ու վատը ջոկել ցանկացող անհատի ճաշակից, զարգացումից և այլ պայմաններից ու յատկութիւններից: Խօսք չկալ, որ գրաբառը և' մշակուած, է և' կազմակերպուած, իսկ աշխարհաբառը դեռ մանուկ ու թոթով: Բայց Բնչ գործնական հետեւանք կարող է ունենալ ալդ համեմատութիւնը կեանքում: Գրաբառը մեռած է: Նորան չի կարելի յարուցանել, բայց աշխարհաբառը թէն դեռ խառնիխուռան ու անկերպարանք, բայց կենդանի է ու ընդունակ զարգանալու: Ի՞նչ օգուտ կարող է լինել, որինակի համար, մարդուս համար Միկել-Անջելլովի հրաշալի, բայց անկենդան անդրիներից, եթէ նա չունենալ իսկական կենդանի կին, դիցուք հէնց ոչ ալնքան գեղեցիկ, բայց տւելի համապատասխան նորա սօցիալական ու Փիզիօլոգիքական պահանջներին: Մի անհերքելի ճշմարտութիւն է, որ մարդուս բնու-

թիւնը, եթէ չլինի աւելի գեղեցիկը, չի հրաժարուիլ և ամենատգեղ կնոջից, ոչ մի ապուշ չի մերժիլ ամուսնանալ, եթէ ալդ նորան հարկաւոր է, միայն այն հիման վերալ, որ իւր ընտրելիք հարսնացուն չի կարող լինել Վատիկանի անդրիների կամ Բելլեդերի Վեներալի պէս գեղեցիկ:

## Գլուխ Հ.

Նալբանդեանի բանտում աշխատասիրած երկերից մեր ձեռքն են հասել միայն «Ղազար Փարպեցու թղթի թարգմանութիւնը» և «Պոօշեանցի Աօս և Կարդիթերի քննութիւնը», որոնք արդէն ապագրուած են և յայտնի են հալգրականութեամբ պարապողներին. իսկ «Աստուածաշնչի համեմատութիւնը», «Նիւթեր Փիզիկա-Փիլօգիկական պատմական-աշխարհագրական ներածութեան համար» և «Քերականութիւնը» մեր ձեռքը չեն հասել, կորած են համարում:

Այդ մեր ձեռքը չհասածներից առաջին երկուսի կորուսան այնքան զգալի չէ, որովհետև դոքա, ինչպէս երեսում է, մի ամբողջ բան չեն եղել, ալ հատ ու կառը, ցիր ու ցան նիւթեր ապագայ գրուածքի համար։ Շատ ցաւլի ու զգալի է Քերականութեան կորուսաը, որի մի մասը բոլորովին գրուած ու պատրաստած է եղել։

Ի՞նչ եղաւ արգեօք «Նալբանդեանցի Քերականութիւնը» Մենք գիտենք, որ նա բանտում նորան չվերջացրեց և չէր էլ կարող վերջացնել. նա նորանից գրեց միայն «Կերածութեան» կէսը՝ 15 տպագրական թերթի չափ և փորձնական քերականութեան առաջին մասը մինչև բայերը։ Մենք համարեա հաստատ կարող ենք ասել, որ նա նորան չվերջացրեց և բանտից դուրս գալուց յետոյ, որովհետև դուրս գալուց յետոյ, նա վեց ամիս մնաց Պետերբուրգում այնպիսի մաշուած ու հալուած դրութեան մէջ, որ անկարող էր մի որ և է գրական պարապմունքի ձեռք տալ, իսկ յետոյ համարեա կիսամեռ դրութեան մէջ գնաց Կամբչին, առվրեց այնտեղ, կարելի է ասել, հոգևարքի մէջ մի քանի ամիս և մեռաւ 66 թուի Մարտի 31-ին անօգնական, թշուառ

և թոքախտաւորներին յատուկ տանջանքների մէջ։ Հաստատ է, ուրեմն, այն հանդամանքը, որ Նալբանդեանցի ալդ աշխատանքից, նորա մահից յետով, մնացել է այնքան, որքան նա գրել էր բանտում։

Թէս կան ասողներ, թէ հանգուցեալն ինքն իւր ձեռքով ոչնչացրել է ալդ գրուածքը, որովհետեւ բաւական չի մնացել նորանից, բայց ալդ չի ճշգրտում, որովհետեւ եթէ հանգուցեալը նորան ոշնչացրած լինէր, չէին մնացած լինիլ «Ներածութիւնից» այն հատուածները, որ մենք տպագրեցինք Շահմարդ Հանդիսի 1900 թուի առաջին գրում։ Անկասկած է, որ Ներածութեան և Փորձնական քերականսութեան գրուած մասը կորել ոչնչացել է նորա մահից յետով՝ ձեռքից ձեռք անցնելով<sup>16)</sup>։

Եւ ալդ, կրկնում ենք, շատ ու շատ ափսոս, որովհետեւ մեր ձեռքը հասած հատուածներից երևում է, որ նա մի շատ ընտիր բան է եղել։ Նորա մէջ, ի միջի ալլոց, եղել է մի զուարճալի կտոր, որի մասին ինքը հանգուցեալը լիշում է իւր նամակներից մէկում։ Մի Վիեննացի հալ Պարիզում խօսում է մի նորեկ հալի հետ, թարգմանելով Պարիզի զանտզան տեղերի անունները և մինչև իսկ իւր գերմանական «donner vitter»-ը

<sup>16)</sup> Որ Նալբանդեանցն իւր «Քերականութիւնը» բանտում չի վերջացրել և միտք էլ չի ունեցել վերջացնել, —ալդ երեսում է նորա 1863 թուի Մալիսի մէկին գրած նամակից, որը մէջ մենք կարդում ենք. «Ո՞չ որ վերաբերում է ինձ, —ես առ ալժմ աշխատում եմ Քերականութեան վերալ։ Ալդ խնդիրը շատ և շատ դժուար է, բայց թէս դանդաղ, թէս հաւի քալերով, անուամենալիւ դարձեալ առաջ եմ գնում, ես մտաղիր չեմ նորան արգելանքիս մէջ վերջացնելու, որ և անկարելի է։ Սակայն նա անպատճառ կվերջանակ ազատուելուց յետով, բայց իէ որքան շուտ, ալդ չի կարելի ասել, որովհետեւ դժուար խնդիր է»։ Իսկ որ Նալբանդեանցը կարող էր ոչնչացրած լինել նորան, ինչպէս պնդում են մի քանիսը, ալդ էլ երեսում է նորա 1863 թուի Մարտի 29-ին գրած նամակներից, որի մէջ նա ասում է. «Ես առողջ եմ և պարապում եմ բաւականին լուրջ կերպով. չորս ունիմ, որ աշխատանքս զուր չի կորչիլ. Սակայն նորան ոչ ոք չի տեսնիլ, եթէ ես լինքս նորանից զգոն մնամ»։

Հալոց լեզուով, իսկ նա, նորեկն ոչինչ չի հասկանում, և ստացում է մի ծիծաղաշարժ տեսարան: Նալբանդեանը մինչև իսկ կամեցել է իւր նամակում այդ շատ լուրջ և մի և նոյն ժամանակ ծիծաղաշարժ պրակից մի քանի տող նմուշ համար առաջ բերել, բայց չի կատարել իւր դիտաւորութիւնը, որովհետեւ Ուուսաց լեզուով կորչում է եղել պատկերի բոլոր կոմիզմը:

Նալբանդեանցն իւր միայնութեան մէջ անցկացրած ժամանակամիջոցում անկամակած աւելի շատ գրական վաստակ կարող էր և պէտք է արտադրած լինէր, քան թէ մենք տեսնում ենք: Դորա պատճառը պէտք է վերագրել մի կօղմից նորա լարատև վատ տրամադրութեան ու հոգու անդորրութիւն չունենալուն, միւս կօղմից էլ նորա լաճախ տկարանալուն և ապիկարութեան: Մենք, օրինակի համար, գիտենք, որ նա նախիջևանցիների խնդիրքով ձեռնարկել էր գրել մի գրուածք Նախիջեւանի մասին, որ լատկացրած էր ծառակելու իբրև պաշտպանութիւն ու պատճախան ալն լարձակմունքների դէմ, որ անում էին Ուուտովցիք Նախիջևանցւոց վերայ թէ բանաւոր և թէ գրաւոր: Նախիջևանի հայկական Մագիստրատի ատենադպիր Մկրտիչ Մորոզեանը թէև արդէն իւր կօղմից պատրաստել էր մի ընդարձակ ռուսերէն գրած պատճախան, բայց չէր վստահանում տպագրել, սպասելով, որ գուցէ, Նալբանդեանցն ինքն համաձայնի գրել: Նա էլ թէև համաձայնել էր և խնդրել էր իւր եղբօրը, որ զուտով իւր ձեռքը հասցնէ հարկաւոր նիւթերն ու տեղեկութիւնները, բայց մինոյն ժամանակ առաջարկել էր, որ Մորոզեանը շտապի իւր գրած պատճախանը տպագրելու, որովհետեւ ինքը լուս չունէր իւր «անիծեալ հիւանդութեան» պատճառով շուտ վերջացնելու նորան:

Տպագրեց արդեօք Մորոզեանն իւր պատճախանը, — մենք չգիտենք, բայց Նալբանդեանցն իւր պաշտպանողական յօդուածն ոչ միայն ուշ վերջացրեց, այլ և իսպառ չգրեց, որովհետեւ այդ ժամանակները, 63 թուի Յուլիսին, նորա հիւանդութիւնն ալնքան սաստկացել էր, որ զրկել էր նորան մի որ և է լուրջ գրական աշ-

խատանքով պարապելու կարողութիւնից<sup>17)</sup>: Ալդ մասին հանգուցեալն իւր նամակներից մէկում, անկասկած նախիջևանցոց յալտնելու համար, գրում է՝ «Հիւանդութեանս պատճառով չեմ կարող պարապել լուրջ աշխատանքով և մեր քաղաքի մասին լոդուածը չեմ կարող գըել»:

Թէև Նալբանդեանցն ալդ լոդուածը չի կարողանում գըել, բայց մենք նորա նամակներից մէկի խօսքերից կարող ենք մօտաւորապէս եզրակացնել, թէ, եթէ նա գրած լինէր, ինչ հիմունքի վերաւ պէտք է հաստատէր իւր դատողութիւնը և ինչ ուղղութեամբ պէտք է առաջ տանէր, զարգացնէր նորան:

Նա նախապէս պէտք է մի համառօտ պատմական տեսութիւնն անէր Նախիջևանի մասին, յետոյ հիմնուելով իւր եղբօր ուղարկած և հաղողդած տեղեկութիւնների ու թուերի վերաւ, պէտք է ապացուց տար, թէ Նախիջևանցիք իւրեանց առևտրական գործունէութեամբ որքան մեծ օգուտ են տուել ու տալիս իւրեանց նոր հայրենիքի արդիւնաբերութեան:

Նորա ասելով, նախ, Նախիջևանի ամբողջ առևտրի տարեկան դարձուածի քանակութիւնը հաւասար էր այն ժամանակ 8,750,000 ռուբլու արծաթի, որից ձեռագործական և գործարանական արդիւնաբերութեան բաժին էր ընկնում մօտ 5,500,000 ռուբլի արծաթ. երկրորդ, Նախիջևանի արական սեռի բնակիչների՝ պատուաւոր քաղաքացիների, վաճառականների, մէշչանների և արհեստաւորների թիւն այն ժամանակ հաւասար էր ոահիւմ 7000-ի. երրորդ, Ռուսաստանի Եւրոպական նահանգների արական սեռի բնակիչների՝ պատուաւոր քաղաքացիների, վաճառականների, մէշչանների, արհեստաւորների և միւս քաղաքային դասակարգերի ամբողջ թիւը հաւասար էր 2,089,084։ Ալդ յառաջադրութիւններից համեմատական լարաբերութիւն կազ-

<sup>17)</sup> Մկրտիչ Մորողեանի ալդ պատասխանը մենք տեսել ենք մաքուր արտադրած ու պատրաստ տպագրութեան համար. Ներկալում ալդ գրուածքը գտնւում է նոր Նախիջևանցի պ. Յակոբ Բողդանեանցի ձեռքին.

մելով, նախ, Նախիջևանի հասարակութեան զանազան գասակարգերի և ամբողջ տէրութեան եւրոպական մասի նոյն տեսակ գասակարգի մէջ, երկրորդ, Նախիջևանի ձեռագործական և գործարանական գործուածքների գարձուածի և տէրութեան ամբողջ արդիւնաբերութեան մէջ, նա եղբակացնում էր, որ առաջին համեմատութիւնը համարեա թէ այնպէսէ, ինչպէս 1: 4000, երկրորդը - ինչպէս 1: 50:

Եթոյ ի նկատի առնելով, որ տէրութեան ձեռագործական և գործարանական գործուածքների ամբողջ, ընդհանուր արժէքը, պաշտօնական տեղեկութիւններին նախիջևանի հաւասար էր 250,000,000 ռուբլու արծաթի, նա գտնում էր, որ, ուրեմն, Նախիջևանը բերում էր ռուս Փաղրիկացիալին զուտ արդիւնք տարին 5,500,000։ Ահա այդ գումարով նա, այսինքն Նախիջևանը պահպանելով ինդրանքի շուկան, պահանջում, բերում է մատուցանքի շուկան տարեկան և զորան հաւասար գումար, այն ինչ Փաղրիկացիան նախ քան կարող լինի այդպիսի մատուցանք անելու, համեմատ ինդրանքի մատուցանքի այդ գումարին, պահպանում է աշխատանքի ինդրանքի շուկան։ Նա շատ հետաքրքրում էր իմանալու ձեռագործական գործարանների բոլոր բանուորների թիւը, Եթէ նա իմանար բանուորների ընդհանուր թիւը, այն ժամանակ իմանալով այդ գործարանների արդիւնաբերութեան ընդհանուր արժէքը և այն բաժինը, որ առնում է Նախիջևանը, կարող կլինէր մի իրական և հաստատուն համեմատութիւն անել և երեւան բերել մի վերին աստիճանի հետաքրքրական յարաբերութիւն Նախիջևանի առևտրական գործունէութեան և գործարանների բանուորների մէջ։ Նա շատ միխթարական էր համարում Նախիջևանի համար և ցորենի ու միւս արտասահման ուղարկուող հում նիւթերի առևտրի համեմատութիւնը, նամանաւանդ որ Նախիջևանն ապրանքով ոչինչ չէր ստանում արտասահմանից, որ, նորա կարծիքով, մեծ նշանակութիւն ու խորհուրդ ունի Փինանսական սիստեմի մէջ։

Նալբանդեանցի հիւանդութիւնը, ինչպէս յայտնի է, թոքախտն էր, որ նորա կեանքի այդ նոր պայման-

ների մէջ սկսել էր արագ զարդանալ: Նա արդէն այն տեղն էր հասել, որ մինչև իսկ իւր նամակները շէր կարողանում մէկէն գրել, վերջացնել, այլ ընդհատումներով, որովհետև նորա մէջքն ու կուրծքը զգալի կերպով լոգնում էին. երբեմն իսկ նա ստիպուած էր լինում ալդ պատճառով շաբաթներով ու ամիսներով ընդհատել իւր գրական պարապմունքը: Հանգուցեալն արդ կողմից վերին աստիճանի զգոյշ էր և աշխատում էր ամեն տեսակ պահպանել իրեն. նա գորա համար ունէր և բաւականին բժշկական գիտութիւն ու պատրաստութիւն, որովհետև Մոսկուալի համալսարանում իւր ազատ ունկնդիր եղած միջոցում նա լաճախել էր բժշկական մասի գասախօսութիւններին, գործնականապէս էլ ուսումնասիրել էր բժշկականութեան գլխաւոր տարերբեր: Բացի գորանից, նորան անդադար բժշկական խորհուրդներ էր տալիս իւր նամակներում Սուլթանշահը, որ լաւ էր ճանաչում իւր ընկերի հիւանդութեան բնաւորութիւնը և հանգամանքները, չենք ասում արդէն այն, որ հարկաւոր դէպքում անյապար բժիշկ էր հրաւիրում նորա մօտ և բանտի վարչութիւնն էլ չէր զլանում ալդ դէպքում ձեռքից եկած դիւրութիւնները մատուցանելու նորտն:

Բացի իւր գլխաւոր հիւանդութիւնից, որի բնաւորութիւնն ինքն էլ, ինչպէս երեսում է, ալդ ժամանակներն արդէն հասկացել էր, նա տանչում էր և ուրիշ ցաւերով, որոնք կամ դարձեալ ալդ գլխաւոր հիւանդութեան հետևանքն էին և կամ անկախ, առաջ եկած նորա կեանքի նոր պայմանների մէջ: Յաճախ այնպէս ցաւում էր նորա կողքը, որ առանց ոյժ գործ դնելու չէր կարողանում նստել. փորկապութիւն ունէր, փայծաղն էր չչարութիւն անումա, կոկորդում զաւ էր զգում, տենդից տանջում: Նա իւր ցաւերի դէմ գլխաւորապէս գործ էր դնում պաշտպանողական միջոցներ, որովհետև նա այն կարծիքին էր, որ իւր կեանքի ալդ ժամանակուայ պայմաններում արմատական միջոցներ չէր կտրելի գործ դնել: Նորա նամակներից մէկում, օրինակի համար, մենք կարդում ենք. «Գլխաւոր ցաւը զգում եմ կողքումս, անիծեալ լերդիս մեծանալուց զըր-

կուած եմ պարապելու բաւականութիւնից։ Առանց աշ-  
խատանքի չեմ կարողանում նստել, ու մինչև անգամ  
հասարակ նամակ գրեմ, հիւանդութիւնս առաջ չի գնում,  
բայց չի էլ նուազում։ Այս արդէն 20 երորդ օրն է,  
որ ծծմբալին քինալ եմ ընդունում և, իբրև օծանելիք,  
քսում եմ cali jodatum. երկուշաբթօւանից խմում եմ  
առաւօտները մի մի բաժակ դառը ջուր, բայց գեռ  
հետևանքը չկար։ Լերգացաւիս պատճառը հասկանալի  
է. — իմ արգելանքիս վերջը չի երևում։ Մի ուրիշ նա-  
յակում մենք կարդում ենք. «Դուք երևի, լիշում կլի-  
նէք, որ տեսակցութեան ժամանակ ես գանգատում էի  
տենդալին դրութիւնից, որի մէջ ես զարթել էի երկու-  
շաբթի առաւօտը։ Տեսակցութիւնից լետոյ, տենդն աւե-  
լի սաստիացաւ, իսկ երեկոյւան դէմ փոխուեց մի ուժ-  
գին պարոկսիզմի, այնպէս որ կենէ բժիշկն այնքան  
դողացած չի լինիլ, որոնելով Ֆրոնկլինին քևեւալին  
սառուցներում, որքան ես Դորա հետ միասին ցաւ էի  
զգում և կոկորդումս, այնպէս որ կուլ տալը դժուար  
էր։ Զեռքիս տակ եղած միջոցներն իսկոյն գործ դրի, որ  
քրտնեմ։ Միւս առաւօտն արդէն բժիշկն եկաւ. կեցցէ Հել  
Այդ թթուն —acid տար. concent'rat. — երեք ժամը մի  
անգամ, երեք-երեք կաթիլ ես ընդունում եմ հրաշալի  
արքայամօրի շաքարաշրի հետ, թթուն ներգործելով  
իբրև լուծողական, ոչնչացրեց կատուարալին տենդը և  
նուազեցրեց կոկորդիս ցաւը, որտեղ բժիշկը կարմրու-  
թիւն գտաւ։ Յոյս ունիմ, որ վաղը բոլորովին առողջ  
կլինիմ, Tinct. Belladonnae թողել էի իբրև պահեստի  
դեղ, բայց մենք այս անգամ չենք խլիլ նորան հօմէա-  
պատների ձեռքից, որովհետև մեզ ալլ ևս բան պէտք  
չէ։ Մի երրորդ նամակում էլ նա զգում է «Առհասա-  
քակ իմ հիւանդութեանս վերաբերութեամբ ներկալ  
հանգամանքներում կարելի է ձեռք առնել միայն պաշտ-  
պանողական բուժիչ միջոցներ, իսկ արմատականի հա-  
մար հարկաւոր են ուրիշ պայմաններ և հոգու անդոր-  
քութիւն, որ ես ունենալ չեմ կարող։ Համբերութիւն,  
և ես կենդանի, թէ մեռած կհասնեմ խաղաղութեան  
նաւահանգիստը. արդէն փարոսն երևում է։ Հանգուցեա-  
լի մերձաւորները պարզ կերպով զգում ու տեսնում էին,

որ այդ բոլորը վատ նշաններ են, և որ եթէ նորա կեանքի ալդպիսի պայմաններն երկար շարունակուեն, այդ կարող է ունենալ նորա համար ճակատագրական վախճան, և աշխատում էին ամեն ձեռքից եկած միջոցներով, որ կարողանան, գոնէ, երաշխաւորութեամբ արձակել տալ նորան:

Նորա եղբալրներից մէկը մինչև անգամ փորձ է անում մօտենալ Խալիքին և նորա միջնորդութիւնը ինդրել, որով շատ ու շատ վշտացնում է հանգուցեալին, որ աւելի լաւ կհամարէր, ինչպէս ինքն ասում էր, Մէֆիստոֆելից օգնութիւն ինդրել, քան թէ Խալիքից Նալբանդեանցն այդ առթիւ պատրաստում էր մի այնպիսի ձևով ու բովանդակութեամբ նամակ գրել Խալիքին, որ դա լինէր մի կողմից ներողութիւն իւր եղբօր կատարած անտակտ վարմունքի համար, միւս կողմից էլ անժխտելի ապացոյց, որ եղբալրն այդ քայլն արել է, առանց իւր գիտութեան, և, զերջապէս, որ դա, այդ նամակը համոզէր նորան, որ ինքն երբէք նորանից օգնութիւն չի խնդրել: «Ես մտածում եմ, գրում է նա այդ մասին իւր եղբօրը, մի փոքրիկ նամակ պատրաստել և ուղարկել Խալիքին: Այդ, նախ, կլինի մի տեսակ ներողութիւն, որ իմ եղբալրն իւր անքաղաքավարութեան պատճառով անհանգիստ է արել նորա թանկագին անձը: Երկրորդ, կլինի մի բօղոք եղբօրս գործողութիւնների դէմ, գործողութիւնների, որ նա կատարել է առանց իմ գիտութեան: Այդ անհրաժեշտ է ինձ անել, որ նա չ'կարծէ, թէ եղբալրս այդ արել է իմ ներշնչմամբ, և որ մի անգամ ընդ միշտ նա համոզուի, թէ ես աւելի շուտ կհամաձայնեմ օգնութիւն ինդրել Մէֆիստոֆելից, քան թէ նորանից: Առանց դէս ու դէն ընկնելու, այս բոլորն ես նորան կգրեմ որքան կարելի է հասկանալի լեզուով ու ձևով:

1902 Մարտի 15

Նոր-Նախիջնան.